

ԱՐԱԲ ՃԱՄԻԼՈՎ



ՊԵՏՐԱՍ 1932 ԷՐԵՎԱՆ

29 JUN 2006

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

~~19 NOV 2010~~

۹۱-۵۷

28

449

ԱՐԱԲ ՇԱՄԻԼՈՎ

ԱԼԱԳՅՈՒԹԻՒՆ

三

ԵԱՐԳՄ. Ա. ՔՈԶԱՐՑԱՆ

1624

~~Ա Ե Տ Ա Կ Ա Ն~~



• ୭୮୮  
1932

13 JUL 2013

Հայոց լուսաբառ հայոց լուսաբառ

Տեղական իշխանության մասին պատճենագիրը

Հայոց լուսաբառ

Մի մեծ ու անչափ բարձր սար եւ, անտանցանելի ու վիթխարի, միայն քոչվորներին եւ իրենց վոչխար ու տավարով՝ մատչելի նրա լանջերը։ Դա Ալա-դյոզն եւ (կապույտ աչք), վոր լայնորեն տարածվում եւ Սարդարարադի ստորոտից ու իր մի կողով հենվում եւ Միսիանի կիրճի շրթին։

Հսկա, ճանապարհազուրկ լեռը ընդգրկում եւ Հայաստանի չորս խոշոր շրջանները՝ Աբարանը, Մոլլա-Գյոզչան, Թալինը և Աշտարակը։ Հեռու, շատ հեռու յերեսում եւ նա իր լայնք ու յերկայնքով։ Նրան շրջապատող ամպերը նմանվում են ծովի, վոր վեհ ու հանդարտ գլորում եւ իր ալիքները։

Յերկնակամարն ել նրա վերը անծայրածիր եւ ազատ։ Որ ու գիշեր հսկում եւ Ալադյոզը Յերեանի բերքառատ հովտին իր հստակ, ձյունածածկ վեղարով և ցածում գրավում ամառային դաշտային աշխատանքներից ու շոգեց կիզվող գեղջուկի ուշադրությունը։

— Հասո, ասում եւ քրդերից մեկը մյուսին, վոր դաշտային աշխատանքներին բատրակ են փարձվել, — Հասո, ու ձեռքը մեկնում եւ դեպի Ալադյոզի բարձունքները, — ա՛, թե են սառույցների մոտ ըլնեյինք, վոր անցած տարի վոչխար եյինք արածացնում, ա՛յ թե հով կըլիներ հա՛։

Պետհրատի Տաղարան Սրբագրեց Ռուկ Պատարացուն

Պատվեր 2863 Պալմիր 7918 (Բ) Հրատ. 2360 Տիրաժ 2000

Հանձնված և արտադրության 5 սեպտեմբերի 1932 թ.

Պատարագված և ապագրելու 10 գեկտեմբեր 1932 թ.

— Հա՞, հա՞, ես անիծված չեյխերն ու  
բեգերը մեզ չխաբեյին, մեր արյունը չծծեյին,  
մենք հմի յել ընտեղ վոչսար կլինեյինք արա-  
ծացնելիս: Ա՛, բա սհենց ել բան, յես իմ  
գերդաստանով հինգ տարի չորանություն եմ  
արել Աղիդ բեգին ու Մեջիդ բեգին, վերջն ել  
վզակոթիս տալով դուրս արին ու վոչ մի բան  
ել հախ չտվին... Գնացի ամենամեծ բեղի<sup>1)</sup>  
կուշը, նա յել պլետի տակը քաշեց թե՝ դու  
կարա՞ս գանգատավոր ըլես իմ բեգերոնց վրա:

— Ո՞ո՞ խուագե<sup>2)</sup>... եղ դու արիր... եղ  
դու եյիր զորավոր չեյխ Աղեն<sup>3)</sup>... վոր Խոֆ-  
դելի ահքը դառնացրիր մեղ վրա: Եղ դու  
եյիր, վոր նրանց բեդ շինեցիր, մեղ՝ քյասիր  
չորան...

Լուռ են յերկուսն ել, մտազբաղ... բայց  
ավելի յեն սեղմում իրենց խանչալների դաս-  
տակները...

Յերկիրը չնչասպառ եր լինում յերկնքի  
տաք գրկախառնությունից, արել հալ եր ըն-  
կել սեփական ճառագայթներից: Տոթը՝ վոնց  
վոր մարախուղ լիներ ողում: Հոգնածու-  
թյունն ե սահում նրանց դեմքերով:

Հասոն ու Բաղոն ավարտեցին ամառվա  
դաշտային աշխատանքները: Վաստակած փո-  
ղը ձեռներին, ուրախ, նրանք վերադառնում  
եյին իրենց տները: Անցան դաշտավայրը,

1) Ցեղակատ:

2) Աստված:

3) Ամենազորավոր առւրբ:

մոտենում են Ալագյոզի ստորին լանջերին.  
անուշ զովը վողջունեց նրանց: Արխալուղի  
գոշերը, բացելով լիաթոռք չնչում եյին նրանք  
կենածաբար հովին ու նրա թևին յեկած հեռու  
ծաղիկների բուրմունքը:

Մոտենում եյին իրենց հարազատ Շամի-  
բան գյուղին: Արել մայր եր մտել արդեն.  
նախիրները տուն եյին դառնում ու ներիների  
գլխավորությամբ բաժանվում դեպի իրենց  
տերերը:

Մութն ընկնում է: Արեկելյան զեփյուռը  
մեղմորն խաղում ե վերևում ու նրա սվար-  
վյունը ձյունոտ դագաթներում ծնվող առվակ-  
ների կարկաչի յե նմանում:

Գյուղի կողքի բացատում մի յերկու  
հարյուր մարդ ե յերեւում: Հասոն ու Բաղոն  
տեսան: Վախեցան:

— Եղ բեգերն են քեփ անում, վոր տեսել  
են մեղ, բեգափեշքեց են ուղելու:

— Արի սպասենք, թող լավ մթնի, հետո  
կոնովը քաշվենք զնանք մեր տները:

Նստած եյին ու հետզհետե սկսեցին հե-  
տաքրքրվել. մշություն մեջ աննկատելի, նը-  
րանք մոտեցան հավաքվածներին ու դիտում  
եյին, թե ի՞նչ ե կատարվում:

Մեծ պղինձներում տժժում եր քոչվորների  
չորան-ղառւրման: Ոջախի կրակը ճարճարում  
եր ու յերկնակամարում ակեծին եյին տալիս  
աստղերը: Յեգերը նստուած եյին կրակի  
առջև փոած խալիչաներին, թիկնած փակուե

դոշակներին ու փետրաբարձերին։ Նրանց կողքին կուլակները, իսկ թիկունքում շարվել եյին նրանց նոքյարները՝ վոտից ոլուխ զինված թուր ու թվանքով, ատրճանակներով ու խանչայներով, փաթաթված լիքը ռիսմիկուշտակալներով։

Բեգի խարույկի շուրջը նստած են նրա մոտ աղղականները, բարձրից և արհամարական նոյնում են քյասիբ-քյուսուրին, վորոնք կորացած մեջքով սպասում են իրենց տերերի հրամանին։

Բեգերիդ մեկը յելավ, նայեց շուրջը։

— Ամեն ինչ լավ եր. քանի յույս չեր ընկել եղ կոմունիստը, ինքներս եյինք կառավարում, մենձի պատիվ կար, եղ կոմունիստը յելավ-չելավ ամեն ինչ տակն ու վրա ելավ...։

Մեծ մերխաս Շամոե-Ասոն վրա բերեց տեղից։

— Նա չե՞ր ինձ գյուղխորհրդի նախադահի տեղիցը վեր հանողը, թե՝ կուլակ ես։ Են տկլորներն եւ ականջ են դնում ու յերես դարձնում աշխրաթի սովորություններից ու որենքներից, ծերերի պատիվը չեն պահում։ Հրեն մեր չորսնի լակոտր, մի փորհացի բան եր անում Մայոցի կշտին, հիմի դիմում ա տվել ու իր բանածի հախն ուզում ա առնի... ելի նրա մատն ա խառը, նա յա պղտորում։ Ուսուբեղն ել ա ասում, վոր նա յա խարաբի տալի, եղ կոմունիստը։

Ու նորից լռեցին։ Զեփյուռը աթարի

ծուխը տանում, վարը նստած գյուղացիների յերեսովն ե տալիս։ Ու վոչ վոք չի խախտում լուսթյունը։

Դիմելով ժողովրդին, խոսք ե առնում մեծ շեյխը։

— Գիտեք, թե ի՞նչու յեն ձեզ ժողովել այստեղ մեր մեծ բեգերը՝ Ուսուբեղը, Զահանգիրն ու Աղիդը։ Հավատարիմ աշխրաթներ, ձեզ կանչել են քեֆի ու կեր ու խումի...։ Քեֆ քաշեք, ազնիվ ելեթներ, խոճայի ծառաներ, քեֆ արեք...։

Առատորեն բացվում են տկնորների ծորակները, գետ դառած հոսում ե դինին։ Նոքյաները թեյի բաժակներով շրջում են քեֆ անողներին։

— Քու վողջությունը Մակուլե մըն,<sup>1)</sup>—բացականչում ե Շամոե Ասոն։ Սա գլխավոր խրմրապետն ե, վոր բեգերի հրամանով ավերում ե անհնաղանդ քրդերին։ Ժողովուրդը վախենում է նրանից։ Յերեկվա հարձակումից հետո Շարքի ցեղի վրա, վո՞ց դեռ դաշնակները ժամանակից չի հնազանդվում բեգերին, հագած ե կարմիր արխալուղ ու թանգագին բեշմետ, զոտեպնդված արծաթաղարդ թասմայով։

— Շարքի ցեղի գլխավորները համաձայն են միանալու մեզ, բայց մնացած մերկ ու չփրաղները բոլորն ել դեմ են, ասում ե Շամոե Ասոն։

1) Իժ աեր, ազատ։

— Իմ հավատարիմ ժողովուրդ ու իմ  
նոքյարներ, -խոսում ե Ռւսուրեգը, -իմ հերն ու  
պապը, պապն ու աղուղապը կառավարել են  
ձեզ: Համաձայն ավանդության, մենք վրա  
յոթերորդ պորտն ենք, վոր կառավարում ենք  
ձեզ: Դուք յեղել եք հավատարիմ, հնազանդ  
ու չեք խախտել մեր ավանդները, ձեզնից վոչ  
մեկը չի յեղել մեր գեմ և Ռւսուրեգի սուրբ ո-  
ջախն ու հացը ձեզ միշտ պահել են դժբախտու-  
թյունից, հիվանդությունից և ձեր տավարը  
ժանտախտից: Բայց հիմի նոր կառավարու-  
թյուն ա եկել, անիծված, անաստված կառա-  
վարություն, խուագեցի գեմ գնացող կտոս-  
վարություն, նրանց ուզածն ե, վոր րոլորն ել  
քյասիր, չփլաղ ու տկրոր ըլնեն, իսկ հարուստ  
չմնա բոլորովին...: Բայց թե վո՞նց ալիսի  
ապրեցինք: Ասենք Հենց Խղոն ա ու չունի են  
իրեք սուրու վոչխարը, բա Քյալաշն ու նրա  
նման քյասիր-քյուսուրը վոնց ա տպրուստի  
դուռն անում: Չե, ես կառավարությունը մեզ  
պես քոչվորի համար սազական չի իսկի: Ա-  
ռանց են ել, -շարունակում ե Ռւսուրեգն իր  
ճառը, -խուաղեցի կամոք, իմ վորդին եսոր ել  
կառավարում ա ձեզ, ինչպես և Զահանգիր  
բեզը՝ իր ցեղը:

Ապրում եյինք մեզ համար եսա չորս տա-  
րի ա, ես կառավարության որով ոչով մեր  
հանգիստը չի խանգարել: Ու տես վոր, նոր  
հիմի, վորտեղից վորտեղ լուս ա ընկնում մեր  
կաղղուցվա չորան Մստոյի վորդին: Նա դավաճա

նել ա իր հավատին ու ցեղին, ոուս կնիկ ա  
տոել, գառել անաստված կոմունիստ, կոտել  
բելս ու միրուք, եկել խելքահան արել ես ջաշ  
ու սարսաղներին, ես շվան ու հավանին <sup>1)</sup>)  
սրանք ել դավաճանել են ազգին, հավատին ու  
դավլերին <sup>2)</sup> և դրա ճամբեն բռնել: Ու դեռ  
սրանց վորդկերանցն ել կոմումոլ ա գրում:  
— Նա ես ա մի ամիս ա իմ դամարն ել ա  
մտել, համա յես ուավաճանողը չեմ, -ասում ե  
Մեջիդ բեգի չորանը:

— Եղ անհավատը, -շարունակում է Ռւ-  
սուրեգը, -իմացել եմ, հմի յել վոտն ու ձեռն ա  
ընկել, վոր մեզ զինաթափ անի: Ինչ ա ու-  
զում մեզնից, ձայնազուրկ արեց, հմի յել  
գե՞նքն ա ուզում խլի...Ախր ես զենքեռ մեր  
ցեղականն ա, մեր ապուղապի մեջքինն ա,  
հետո յել մեր պապերն են բանացրել ու մեզ  
ել հայրերի ձեռիցն ա հասել:

— Իմ հավատարիմ խուլամներ <sup>3)</sup> ու աշի-  
րաթներ, ասեք սրտներիդ ուզածը, մենակ թե  
Մստոյին պետք ա վերացնել: Բեզն ունեվոր ա,  
ինչքան ուզեք վոչխար կտա, նա կոն <sup>4)</sup> ել  
կտա, մենակ թե Մստոյի համիցը դա:

— Պետք ա վերացնել նրան, քրոական հա-  
վատը և նրա ոչիրաթի անարատությունը պա-  
հելու համար:

Խուլամներին ընծաներ բաժանեցին, կու-

<sup>1)</sup> Զրան—բատրակ:

<sup>2)</sup> Կ ոնական ափանդություններ:

<sup>3)</sup> Մառաներ:

<sup>4)</sup> Այժմ բրդից գործած քոչվորի վրան:

լակի պոչերին ել բաժին հասավ։ Բախշից տը-  
վողը ցեղի բեգերն ու կուլակներն եյին։ Զքա-  
վորներից, առաջինը վոր մերժեց ընծան,  
բատրակ Աղեն եր, Զուքրի ցեղից։ Բոլոր ու-  
նեվորներն ու կուլակների հավատարիմները  
հարձակվեցին նրա վրա չարությամբ և սպառ-  
նալիքներով։ Անհոգի, անհավատ, ուզում ես  
մատնել մեղ, հա<sup>9</sup>...

Աղեն դուրս յեկավ կուլակների շրջո-  
պատից ու մոտենալով չքավորների խմբին,  
կանգ առավ նրանց մոտ։ Սպառնալիքները չը-  
վախեցրին Աղեյին, նա խորհուրդների համա-  
գումարի անդամ եր շրջանային ու դավառային  
մասշտաբով։ Նա լսել եր պատգամավորների,  
կառավարության ու իշխանության ներկայա-  
ցուցիչների ճառերը և դիմեր, վոր հեռու չէ  
այն որը, յերբ դալու յե այդ ձրիակերների  
վերջը։ Բոլոր այդ խայտառակությունները  
նա լուր ու մունջ տանում եր, որեցոր սպասե-  
լով այդ ժամին։

Ամբոխը խոսք տվեց ցեղատեսներին, վոր  
հավատարիմ կմնա իրենց ավանդներին ու  
հնագանդ՝ բեգերին ու նրանց խռոքին։

Զքավորները, մի կողմ խմբված, դառնու-  
րեն լսել եյին։ Նրանց մոաւեցավ Փիր-Արասը<sup>1)</sup>։

— Յես յոթ տարի ավագանիների անդամ  
եմ յեղել ու աստծուն չեմ ուրացել, իսկ դուք  
վոչխարների նման եղ անաստվածի խոսքովն  
եք ընկել։

— Ճարներս ի՞նչ, ասում ե չքավորներից  
մեկը։

— Ձեղ են պլետավոր ալրիստալին ա պա-  
կասում։ Մի ձեռս բռնող չլիներ, յես ձեղ շանց  
կտայի, թե վոնց եք ձեր բեգն ու ոռւսփին<sup>2)</sup>)  
թողած, եղ Մստոյի յետևից գնում։

— Թող դրանք չկարծեն, մեջ ե մտնում  
Մեջիդ բեգը, թե շատ ա երկար բալչովնիկի  
որը, հրես ելի մեր պլետի տակն են ընկնելու,  
են վախտը մենք դրանց հախիցը կդանք։

Գինովյած բեգերը անարգել ասում եյին  
իրենց ցանկացածը։ Այդ պրովակացիան աղ-  
ում եր չքավորների վրա։ Նրանք սարսափում  
եյին այն մտքից, վոր, յեթե նորից նրանց  
ձեռքն ընկնի իշխանությունը, նրանց պլետ-  
ները խավարեցնելու յեն չքավորների կյանքը։  
Մեջիդ բեգը վեր կացավ որորվելով, տկնորը  
կոնատակին ու թեյի բաժակը ձեռքին մոտե-  
ցավ չքավորներին հրամցնելու։ Հնավանդ սո-  
վորության համաձայն անկարելի յեր մերժել  
բեգի պատիվը։ Նա մոտեցավ Աղեյին։

— Յես, ախտերս, յերբ հարյուրատես  
եյի դաշնակների որոք, պարուչիկի չինի յել  
արժանացա, ասում եր Մեջիդ բեգը որորվե-  
լով, ու դու եղ իշխովդ մեկ դեռ խեթ ես  
մտիկ տալիս ինձ. դու դեռ սպասիր։ Առ-  
խմի, ու բաժակը խոթում ե Աղեյի բերանը։

— Կեջիդ-բեղ, յես չեմ խռում, դող ու-  
նեմ։

1) Հոգեորական աստիճան և  
10

լակի պոչերին ել բաժին հասավ: Բախշից տը-  
վողը ցեղի բեգերն ու կուլակներն եյին: Զքա-  
վորներից, առաջինը վոր մերժեց ընծան,  
բարբակ Աղեն եր, Զուքը ցեղից: Բոլոր ու-  
նեվորներն ու կուլակների հավատարիմները  
հարձակվեցին նրա վրա չարությամբ և սպառ-  
նալիքներով: Անհոգի, անհավատ, ուզում ես  
մատնել մեղ, հա՞...

Աղեն դուրս յեկալ կուլակների շրջա-  
պատից ու մոտենալով չքավորների խմբին,  
կանդ առավ նրանց մոտ: Սպառնալիքները ըր-  
գախեցրին Աղեյին, նա խորհուրդների համա-  
գումարի անդամ եր շրջանային ու գավառային  
մասշտաբով: Նա լսել եր պատգամավորների,  
կառավարության ու իշխանության ներկայա-  
ցուցիչների ճառերը և գիտեր, վոր հեռու չե-  
ան որը, յերբ գալու յե այդ ձրիակերների  
վերջը: Բոլոր այդ խայտառակությունները  
նա լուռ ու մունջ տանում եր, որեցոր սպասե-  
լով այդ ժամին:

Ամբոխը խոսք Խվեց ցեղապեաներին, վոր  
հավատարիմ կմնա իրենց ավանդներին ու  
հնագանդ՝ բեգերին ու նրանց խոսքին:

Զքավորները, մի կողմ խմբված, դառնու-  
րեն լսել եյին: Նրանց մոսեցավ Փիր-Արասը<sup>1)</sup>:

— Ծես յոթ տարի ավագանիների անդամ  
եմ յեղել ու աստծուն չեմ ուրացել, իսկ դուք  
վոչխարների նման եղ անաստվածի խոսքովն  
եք ընկել:

— Ճարներս ի՞նչ, ասում ե չքավորներից  
մեկը:

— Ձեղ են պլետավոր պրիստավին ա պա-  
կասում: Մի ձեռս բռնող չլիներ, յես ձեղ շանց  
կտայի, թէ վոնց եք ձեր բեգն ու ոռւսփին<sup>2)</sup>)  
թողած, եղ Մատոյի յետևից գնում:

— Թող դրանք չկարծեն, մեջ ե մտնում  
Մեջիդ բեգը, -թէ շատ ա երկար բալչովնիկի  
որը, հրես ելի մեր պլետի տակն են ընկնելու,  
են վախտը մենք դրանց հախիցը կդանք...

Գինովշած բեգերը անարգել ասում եյին  
իրենց ցանկացածը: Այդ պրովակացիան ազ-  
գում եր չքավորների վրա: Նրանք սարսափում  
եյին այն մտքից, վոր, յեթե նորից նրանց  
ձեռքն ընկնի իշխանությունը, նրանց պլետ-  
ները խավարեցնելու յեն չքավորների կյանքը:  
Մեջիդ բեգը վեր կացավ որորվելով, տեճորը  
կոնատակին ու թեյի բաժակը ձեռքին մոտե-  
ցավ չքավորներին հրամցնելու: Հնավանդ սո-  
վորության համաձայն անկարելի յեր մերժել  
բեգի պատիվը: Նա մուռեցավ Աղեյին:

— Յես, ախալերս, յերբ հարյուրապետ  
եյի դաշնակների որոք, պարուչիկի չինի յել  
արժանացա, -ասում եր Մեջիդ բեգը որորվե-  
լով, -ու դու եղ իշի գլխովդ մեկ դեռ խեթ ևս  
մտիկ տալիս ինձ. դու դեռ սպասիր... Առ-  
խմի, -ու բաժակը խոթում ե Աղեյի բերանը:

— Աեջիդ-բեղ, յես չեմ խառնում, որդ ու-  
նեմ:

1) Հոգեորական աստիճան ե.

— Ախմախ, —ասում եւ թունալից ժայիտով  
Մեջիդ բեգը, —դողի ամենալավ դեղը դինին  
ա, —ու նորից մոտեցնում եւ բաժակը Աղեցին:  
Աղեն չխմեց: Չխմեցին և մյուս չքավորները,  
բացի կույակների հավատարիմ պոչերից:

Շեյխերը, կույակներն ու ոռւսինը հան-  
դիմունում, անիծում են Աղեցին, բեգի խոսքը  
գետնովը տալու համար:

Խորովածը, հացն ու դինին մինչև լուսա-  
բաց անպակաս են սուփիրից:

Ուսուբեգի ու Զահանգիր-բեգի մեջտեղը  
բազմել եր դաշնակը: Նա հրամանատարի դեր  
եր խաղում, փսխում եր այս ու այն բեգի  
ականջին, ու սրանք նոր միայն բանակցում  
եյին գյուղացիների հետ: Սուփրեն վերջանա-  
լու վրա յեր: Շատերը հարրած, հայեց ընկած  
խոմիացնում եյին ոջախի մոտ: Մյուս շեյ-  
խերը, փիրերը, բեգերի ազգականներն ու կու-  
յակները հպարտությամբ պատմում եյին ի-  
րենց արկածների մասին, թե ինչպես եյին  
թալան անում դաշնակների որոք:

Զահանգիր բեգի հորյեղբայրները Ալի-  
Բաբասիլ Ողլին ու Հասան-Աղա-Ռասույեկը  
պատմում երին Հասան ցեղի բեգերին, վոր ի-  
րենք Զահանգիր-բեգի հետ միասին՝ ազգայ-  
սական կոտորածների ժամանակ մի գյուղում  
քշել են բոլոր տղամարդկանց ու կանանց մի  
չենքի մեջ ու կրակ տվել: Կույակների մի տյլ  
խումբ վիճում եր Ալագյաղի ստորասների մա-  
սին, վոր նրանց պես արոտ սաղ աշխարհումն

ել չի գտնվի, և վոր նույնիսկ Զալալի շեղը,  
վոր ապրում եւ Տաճկաստանում, խնդրել է  
Գեմալ-իւաշային թույլ տա իրենց տեղափոխ-  
վելու Ալաղյող:

Տեղից յելնում եւ գաշնակը, նախկին խըմ-  
րապետը, վոր լավ տիրապետում եւ քրդերե-  
նին: Նա նախ կարգում եւ Մատոյի՝ բեղերի,  
կույակների ու կրոնի դեմ՝ զրած հողվածնե-  
րը, ապա սկսում եւ իր ճառը:

— Ձեզ քաջ հայտնի յե, վոր այս իշխա-  
նությունն ավելում եւ զյուղացուն, ուզում ե  
բոլորին չքավոր դարձնի, չքավորին ել՝ բատ-  
րակ, մի խոսքով՝ վոր բոլորը չքավոր լինեն  
ու աշխատեն նրանց համար: Նա ձեր միջից  
Մատոյի պես չփաղներին ջոկում եւ դարձնում  
ձեզ զեկավար: Մի տեսնենք, թե ի՞նչ մարդա-  
դա... Դուք հո լավ գիտեք, վոր ինքն ու իր  
հերը միշտ ել բատրակություն են արել մա-  
լականների, հույների, հայերի ու քրդերի  
մոտ: Իրենց կյանքում յերկու փութ ալրից ու  
մի ելից ավել բան չեն ունեցել: Հրես նրա  
տերը, թող ասի, —Եվմում եւ գաշնակը մի յեր-  
կարաբեղ քրդի, —Հիմա յեկել ե ձեզ մոտ, ձեր  
հիմարներն ել լուսւմ են դրան ու զեմ են դռւրս  
զալիս բեգերին, իրենց տերերին ու հոգեվո-  
րականներին: Նա խարում ե ջահեներին, ու-  
ղարկում նրանց քաղաք, վոր իրեն սովորածը  
նրանց ել սովորեցնեն: Դուք պետք ե ձեր բե-  
գերի հետ լինեք, վոր հաստատ լինի ձեր տունն

ու տեղը, իսկ եղալիսիներին դուք պետք է քշեք ձեր շրջանից...

Նրա ճառը ընդհատվեց գամփոների հաջոցով ու ծիերի դոփյունով և մեկը զիլ ձայն տվեց.

— Վո՞րտեղ ե ապրում գյուղաբորհողի նորիսպահը, պետք ե տեղավորել միլիցիոներներին:

Ամբոխը խուճապի մեջ փախչում ե իրենց տները: Դաշնակը չներոց ե լինում, ու հազիվ նրանցից աղատվելով, իրեն զցում ե Մեջիդբեգի տունը: Տիրեց լություն: Հասոն ու Բաղոն չվարել եյին: Նրանք հովտում, հայկական գյուղերում տեսնել եյին, վոր այդ տիրականերից հետք անդամ չեր մնացել, իսկ այստեղ սրանք դեռ ևս զինված, աղտօն ման են գալիս ու դեռ առաջվա պես ել ուժ են բանացնում քրդերի վրա: Նրանք լուռ մաածում եյին իրենց տեսած ու լսածի մասին:

Աշնան գիշերը վոսկե փարչա յեր հագնում: Լեռներում սառել եր տապի շունչը: Գիշերվա հովն անցնում եր նրանց մարմինը: Յերկնակամարում սառած աստղերը արծաթյա աչքերը սեվեռել եյին յերկրին: Ծանր մաքերը պաշարում եյին Հասոյին ու Բաղոյին: Նրանք յերկուսն ել լուռ եյին: Հասոն հանկարծ վեր թռավ ու թափահարելով Բաղոյին, ինչպես քնած մարդու, ասաց.

— Գնանք տուն, նրանք եսա ցրվել են,

եղուց ել կդանք Աղեյի կուշտն ու կմտածենք մեր անելիքը:

— Հա Հասո, լավ ասիր, Աղեն լավ տղայա, համա մենակ ա, արի մենք ել, վոնց վոր հայի գեղերում, միանանք նրան, մեր յաչեյկեն շինենք ու աշխատենք:

— Խելքդ գլխի՞դ ա,-ասում ե Բաղոն,- յաշեյիումը մենակ կոմունիստներ են ըլում, մենք վո՞նց կարանք: Բա դու չիմացար, վոր բատրակների ժողովում Ոհաննեսն ասեց, թե յաչեյկեն ենա, յերբ վոր մարդիկ միանում են աշխատելու:

— Զե, եղ սխալ ա,-ասում ե Հասոն...

Շները, քեֆից մնացած վոսկորի հոտն առնելով, մոտեցան ոջախին ու հանկարծ ժթության մեջ հարձակվեցին Հասոյի ու Բաղոյի վրա:

Շները քշելով, նրանք քաշվեցին իրենց տները:

Աղեն չքնեց այդ գիշեր: Բեգերի, շեյսերի ու կուլակների խոսակցությունը ծանր մուրճով հարվածում եր նրա ուղեղը: Նա արխաւլուղի դրաբանից թութուն հանեց փաթաթեց ու լուցկին վառեց: Այդ աղոտ լույսի տակ քրնած յերեխաներն ու կինը նրան դունատ թվացին: Ահազին սկավառակի նման վառ դեղին փայլ ունեցող լուսինը նայում եր պատուհանից: Աղեն մտածում եր առավոտյան: վաղ զնալ ու ամեն բան պատմել միլիցիոներներին: Իր մտքերի հետ ընկած՝ Աղեն չնկատեց լուսնի

մայր մտնելը և ուշքի յեկանի այն ժամանակ, յերբ հենց իր դլխավերելը բարձր ու աղեկտուր բառաչեց միտակ կովը, վոր արդեն դուրս եր գալիս նախիրին խառնվելու:

Արեւ բարձր եր կանգնած, յերբ դյուդը զարթնեց: Յերեկվա քեֆից հետո բոլորը քնով եյին լեղել, մինչդեռ ահագին որվա անելիք ունեյին՝ ջուերն ու որարաշիները հրաման ելին ամել յելնել ձմռան քոչի: Բոլոր կառուներում իրար եյին անցել, շտապ քանդում եյին իրենց կոները (մրանները), հավաքում եյին կարպետ ու խալիչաներ, քանդում ու դարսում եյին փայտե մասերը, չփանր, չիթն ու փարզաները, գույնըդդույն գոհիները, վորով դարդարված են նրանց վրանները:

Հասոն ու Բաղոն չեյին շտապում— ասենք մի առանձին անելիք ել չունեյին: Ձմռան քոչին շտապում եյին շատ վոչխար ունեցողները...

Մյուս որը Բաղոն նստած եր իր չեմքեն, յերբ նրա մոտով անցավ Աղեն:

— Բարի որ, Բաղոն, յե՞րբ ես յեկել:

— Յերեկ եմ յեկել—պատասխանում ե Բաղոն:

— Հ՞ը, վոնց անցկացրիր ամառը դզումը, չո չես հիվանդացել:

— Հիվանդանալը չիվանդացա, համա անտեր չոգը ճենճերս հանեց, — ասում ե Բաղոն:

— Մատոյին չե՞ս տեսել, յե՞րբ ո դալու:

— Չեմ տեսել, Համ ել վո՞նց եյինք տեսունելու, մենք հանդումն եյինք բանում, քաղաք չենք դնացել:

— Հ՞ը, թաղա ի՞նչ խարար ունեք:

— Խարար շատ կտ, լավ կլինի մի բոլորս հավաքվենք ու մենք կպատմենք, թէ վոնց են ենտեղ չքավորն ու բատրակը միասին աշխատում:

— Մատոն ամառը յայլաղն եր գնացել, — ասում ե Աղեն, — ժողով եր արել, ասել, սովորացրել, թէ վոնդ պետք ա կազմակերպել, համա, — բեգերը մեջ ընկան, բանը խարար արին:

— Երեկվանը են ի՞նչ ժողով եր են տափումը, — հարցրեց Բաղոն:

— Յես հենց ուզում ելի տեսնել Մատոյին ու ասել, վոր բեգերը շեյխերն ու կուլակները, դաշնակների ոգնությամբ, ուզում են նիտն ուադ անեն ըստելից, — ասում ե Աղեն, նայելով չորս կողմր:

— Վոնց թէ ուադ անեն:

— Հենց ընենց, ուզում են հավաքեն իրենց քարիլը<sup>1)</sup> ու դանդատ տան նրա վրա: Բեգերից շտաբերն ել դաշնակների հետ միասին, առաջարկում են սպանել նրան, վոր պրծնեն նրա ձեռիցը. ասում եյին զանգատը չի ոգնի:

Բաղոն դարմանըով մոտեցավ Աղեյին:

— Բա, ի՞նչ ասին մերոնք:

— Ո՞վ մերոնք—հարցրեց Աղեն:

1) Ազգ ու ազգականներին

— Տո դե չքավորները... նրանք բոլորն ել Մստոյի կուռն են սլահում, նրանք լավ գիտեն, վոր Մստոյի գալով իրանք մի քիչ աղատ շունչ առան: Հրեն հա, հայի գեղերումը չքավորը բոլորովին աղատված ա հարկից, իսկ մեղ մոտ... Մեր չքավորը քոչհարկ ու տիեզ, գյուղատնտեսական հարկ ա տիեզ, դրա վրա յել ավել-բեղահարկ ա տիեզ: Ախր չորս տարի ա մեղ մոտ բալշելիկի իշխանություն ա, խորհրդաւին իշխանություն ա...

— Ի՞նչ անենք, բալշելիկի իշխանությունը մեղ մոտ չի, ուրիշների մոտ ա, -ասում ե Աղեն: Են աստօճը, գուղ եմ ասում:

— Զահանդիր բեգն ել եղ իրա աշերաթն ա կառավարում, Ալիխան բեգը՝ իրանը: Նրանք ո՞ւմ կուռը կալահեն, իհարկե իրանց հարուստների, իսկ մեզանից ոխտը կաշի յեն քաշում: Այ թե ինչի յեմ ասում, վոր հլա մեղ մոտ բալշելիկի իշխանություն չկա...

Առավոտվա ողը բուրում եր չոր, աշնանային բուրմունքով, քամին սկսում եր շարժել կանաչ խոտը, վոր բուսել եր գյուղնվը մեկ ամառվա բոչի ժամանակ: Բաղվող արեր մի պահ ծածկից գանգուր ամպի յետեր, ապա առատորեն ճառագայթեղ լեռնալանջերին, գյուղի, -Աղեյի և Բաղոյի վրա:

Բաղոն հառաչեց, ու քիչ հեռանալով, նստեց մի քարի: Աղեն ել նստեց նրա կողքին:

— Դու գիտե՞ս, Աղե, վոր հայի գեղերումը, ուր վոր բանում եյինք ես ամառ, տերտերնե-

րին ու կուլակներին ձայնազուրկ են արել, որանց իսկի ժողովի յել չեն կանչում:

Եղդիրեցի Խաչատուր աղեն մի՞տք ա, նրան վոչինչ չտվին, կալվածքն ել խլեցին, իսկ մեղ բեգերը ըստեղ հալա իշխում են մեղ վրա:

— Հայի գեղերում, -ասում ե Բաղոն, - համարյա ամեն որ գալիս եր բարբակների մեծը, հավաքում եր մեղ, ժողովք անում ու սովորացնում մեղ, թե վոնց պետք ա կովել հարուստների ու տերտերների դեմ...

— Բա մերո՞նք են, -ասում ե Աղեն, -յերբ վոր Մստոն սկատմում, սովորեցնում ա նրանց, անիծածները գնում մեկ-մեկ խաբար են անում բեգերին Մստոյի ասածները: Բա հմի տես ա՞ . բեգերին հարկ չենք տալ, իշխանությունն ել մեղ աղատել ա՝ վոնց վոր չքավորի, հայ չքավորներին ել հո վաղուց ա խորհրդացյին իշխանությունը աղատել հարկից:

— Կարա՞ս չտալ, Ուսուր բեգը յա Ալիխան բեգը կղրկի իրա Շամոյե-Հասոյին ու կկողոպտի:

— Յես կարծում եմ վոր, -ասավ Բաղոն վեր կենալով, -վոնց ել վոր ըլի, պետք ա իմաց տալ Մստոյին, յա թե չե միլիցի նաշանիկին, թե չե կսպանեն տղին:

— Ապանելը չեն սպանիլ, համա... Ախր իրանք ել են վախըմ: Ինքն Ուսուր բեգը առավ սպանել չի կարելի, մին ել տեսար եղ բանի համար մեղ ել գնդակահարեցին: Զե վոր Ու-

սռւթ բեղը դաշնակների պարլամենտի անդամ  
ա ելել, որենքները իմանալիս կլինի: Դեռ ցա-  
րի վախուզին ել, ամիսը մեկ, նամեսնիկի  
կուշտն եր գնում ու վորապես անդրկովկասի  
քրդերի ցեղապետ, ոռծիկ եր ստանում:

— Բա ի՞նչ վճռեցին երեկ գիշեր, — հարց-  
նում ե Բաղնոն:

— Նրանք խալխի դամարն եյին մտել, վոր  
գանգատ դրել տան:

— Մենք պետք ա չքայորական ժողով  
գումարենք ու բատրակներին ել կանչենք,  
վոնց վոր հայկական գեղերումն եյին անում ու  
հասկացնենք նրանց, թե բեղերն ու դաշնակ-  
ներն ինչ են ուղում բերել Մատոյի գլխին ու  
յես հավատացած եմ, վոր չքավորն ու բատ-  
րակը մեղ հետ կլինեն և վոչ թե բեղի ու կուլո-  
կի հետ

— Պետք ա գումարել, ասում ե Աղեն ու  
նրանք բաժանվում են:

Գյուղացիք պատրաստ եյին քոչի: Զմռան  
իրերը հավաքել, բարձել եյին յեզների վրա,  
վորոնց քեկը բերել եյին յերեխաները գյուղի  
բոլոր ծայրերից: Ժամը ութին ամեն բան  
պատրաստ եր ու գույնզգույն քարվանի յեր-  
կար ու աղմկալի ժապավենը ծավալվեց կանա-  
չած ճամբով:

Զահանդիր աղան քրդերի ղեկավարն եր:  
Նա բնավ չեր զգում խորհրդային իշխանու-  
թյան գոյությունը, նաև վարվում եր ցեղի հետ  
այնպես, ինչպես վարվել եր նրա պապն

ապուապապը, նա զգում եր իրեն ինչպես գաշ-  
նակների որոք: Զահանդիր աղան իր ձիուն  
հեծած, կանդնել եր սարի վրա ու հրամանա-  
տարի պես անց եր կացնում իր մոտով քար-  
վանը: Յերբ տեսավ ամեն ինչ կարգին ե,  
խթանեց իր մոխրագույն նժույզն ու յորդա  
քշած, անցավ դեսի քարվանի դրուխը:

Մի չորան, մի մեծ վոչխար եր ուսովն  
առել, մորր ճանապարհին կոտրել եր յետեկի մի  
վոտր: Խեղճը հոգնել եր, հայից ընկել, քրր-  
տինքի մեջ կորել: Նա հազիվ եր քայլում:  
Վոչխարը, վոր չարունակ առաջին վոտքերով  
թիրտում եր, մեկ եւ զարկեց ու ղետին ըն-  
կավ: Այդ նկատեց Զահանդիր աղան, քշեց  
ղետի չորանն ու ասպանդակների վրա կանգ-  
նելով, ալիւտի տակն առավ նրան...

— Տո իշի դրուխ, վաչխարն ո՞ւր ես ղետ-  
նովը տալիս: Տո ոու դրա մի վոտն եւա չար-  
ժես, շարունակում եր նո հարվածելով, տո  
շունչան վորդի, յես հմի քեզ ցույց կտամ  
վոչխար վեր ցցերո...

Բատրակը կծկվելով Զահանդիր աղայի  
ուժեղ հարվածներից, գոտում եր.

— Աղա ջան, քու զույն եմ, քու նոքարն  
եմ, դե բիրդան ելով... ինքը դուրս պրծավ  
ձեռիցս, բեզպարել եմ ախր... հըեն վո՛րտեղից  
ա հա, չալակած բերում եյի...

Այս խոսքերը Զահանդիր բեղին անթույ-  
րատրելի թվացին մի բատրակի բերնում, մորը  
խոսում եր իր ցեղապետի հետ, ավելի կա-

տաղացրին նրան։ Նա ձին քչեց բատրակի վրա, գետին զլորեց նրան ու շարունակեց մտրակել։

Խեղճ բատրակը տեսնելով, վոր փրկություն չկա, -վերկացավ փախավ պահվեց կանաց թիկունքում։ Զահանդիր աղան հավտարիմ եր հնավուրց ավանդներին ու սովորություններին, նաև չհետապնդեց նրան, վորովհետեւ քրդերի աղաթով յեթե մեկը պաշտպանվի կնոջ յետեւ՝ չեն խփի։ Մեծ առար ու դմիոցի, սպանության ու կովի ժամանակ յեթե քուրդ կինը մեջ ընկնի ու պոկելով իր գլխակապը գետին նետի, ասելով՝ եւ չանցնեք ես զիծը, ինքը Մահմեդն ե արգելել, եւ մի կովեք ու կոտորեք, -յերկու կողմն ել կհընազնդվեն այդ բանին։

Բատրակի միակ պաշտպանությունը կառայք եյին և նա ընկալ նրանց կողմբ։

— Քու բաղդն եր, վոր փախար եռ կողմո, թե չե յես քեզ ցույց կտայի թե վոնց ես իմ հորեղբոր վոչխարր գետնովը տուլի, տո խողի բալա, տո եշի կաթ կերած, -շարունակում եր Զահանդիր բեզը իր հայՀոյանքը։

Քոչվորը շարժվում եր խիստ հարզապահությամբ՝ առջևից յեղներ ու ձիեր հեծած գնում եյին հարուստների կախայք։ Բատրակների ու չքափորների ռնտանիքներն եւ՝ վոտում, մեջքին կապած ծծեր մանուկներին, վորն եւ յերեխտ չուներ, բարձած եր զոհաղան իրերով ու բերի տակ անքալով, հաղիվ եր քայլում։

ՀՅ

Սրանց յետեւից գալիս եյին բարձած յեղները, յեղների յետեւից ձիերն ու կովերը, ամենավերջը այծն ու վոչխարը։ Տղամարդիկ-կուլակ ները, շեյլսերը, փիրերն ու մոլաները՝ ձիով շարժվում եյին քարվանի կողքերից, իրենց ընտանիքներին մոտիկ։ Արևոտ չոգ որ եր։ Զահանդիր բեղի կինը, տասներեք տարեկան Զաղենա խանումը քշում եր իր ձին թանդադին ամանեղենի, խաս ու աթլաս անկողնի, վոսկու և արձաթեղենի բեռի կողքից։ Քրտինքի մեջ կորած ու մանդիխի<sup>1)</sup> ճյուղքով նա ծուլորեն քշում եր ճանձերն ու մոծակները։ Նա հրամանատարի պես գոռում եր իր ջարիների<sup>2)</sup> վրա, հիշելով իր ամուսնու աղջականի վայր ընկած վոչխարի մասին։

— Ի՞նչու այդ սրիկային մի անկամից չսատկեցրիր, դրանք բոլորն ել գայլ են գառել ու անտաւի ճամբեն են պահում։ Դրանց վոր պլետի տակ չպահես, մեղ կը կը պահեն։

Քարվանի ճամբան բունել եր բաղմազան ձայների մի դժմոց, բայց բոլորից ավելի լսվում եր վոչխարների, գառների ու այծերի մայունը, տավարի բառաչն ու ձայնը, յերեխաների ու աղջիկների ձայները, վորոնք յերգում եյին իրենց քոչվորի յերգերը։ Բոլորն ուրախ եյին, զվարթ։

Խեղճ, ծեծված բատրակը գնում եր կռացած իր վշտի ծանրությունից։ Մարակի հար-

1) Բուրամիտ, կարմրատերեկ մի բույս եւ.

2) Քուրդ էվասնուհների սպասումիւն.

վածներն ավելի ու ավելի եյին կապտում ու  
նա հաղիվ եր իրեն զսպում :

Այդ ծեծի տեսարանին վկա յեղալ Հասոն,  
վորը բատրակություն եր արել հայերի մոտ,  
յեղել եր բատրակիոմի ժողովներին, գիտեր  
խորհրդային որենքները բատրակների մասին:  
Նա ջերմորեն բողոքում եր ու կոչ անում բատ-  
րակներին, չքավորներին ու միջակներին վերջ  
դնել այդ կամայականությանը:

— Ձեզնից շատի կաշին ա պատռել րեգի  
պլետից, դուք պիտի իմանաք, վոր հմի ել եդի  
չկա: Հմի նրանք պտի վախեն մեղանից, իշխա-  
նությունը մերն ա, իսկ մենք հայլաններս  
անլեզու անսասունի նման ուտում ենք դրանց  
քոթակը, մեր վիզն առնում դրանց հարկերը:

— Ո՞վ ա դրան ընտրել: Ի՞նչի մենք դուդ-  
խորհուրդներ չունենք: Հերիք չի ինչքան  
մեր արյունը խմեցին:

Այս խոսարերին ձայնակցեցին բեռնա-  
վորված կանայք: Սրանց հետ միասին Հասոյի  
ձայնին միացան տղամարդիկ և բողոքի ու  
տրտունջի աղաղակը ծայր տվեց այդ ծեծի  
առթիվ: Դժգոհների թիվն ավելանում եր,  
սկսեցին հիշել, վոր ամառը քոչին նա յերկաթյա-  
շերով ել եր ծեծել:

— Իսկ իմ դլիսին ել երկու մահակ ա ջար-  
դել, թե ինչ ա իր դադի կշտի աղբերեցը ջուր  
եմ առել...

Ել հերիք ա, դրանց դատաստանը մենք  
կանենք:

Այս խմբին մոտեցավ կուղակ Մայե-Շա-  
մո-Ռուսին, սպառնալով, վոր բեգը կվերադառ-  
նա ու դրանց բուրդը կդզի:

Ամբոխը շրջապատեց Մայե-Շամո-Ռուսին:  
Մի բարձրահասակ չորսն կանչեց. «Տո, պոկի  
դրան ձիուց, դրանք են մեր բանը խարար ա-  
նողները», ու բանելով նրա գոտուց, դետնովը  
տվեց: Ամբոխը վոտնակով արեց կուղակին:

Մայեի գուղին՝ վրա հասավ Զահանդիր  
բեգը՝ հրացանը ձեռին ու գոռաց.

— Ցրվեք, թե չե կրակում եմ:

Ամբոխը թողնելով չարգված Մայեյին,  
դեռ ու դեն փախավ:

— Ո՞վ եր սկսողը, ողոռաց Զահանդիր  
բեգը ատամները կճրացնելով ու հրացանը  
պատրաստ, դիմելով ամբոխին:

— Ետ մենք ենք արել, միաբերան պա-  
տասխանեց ամբոխը: Մինչ այդ կանայք  
չեյին խառնվում գործին, բայց յերբ տեսան  
Զահանդիր բեղին, բեռների միջից դուրս քո-  
շեցին վրանների ցիցերը ու հարձակվեցին  
Զահանդիր բեգի վրա: Ալմաստ անունով  
մի հաղթանդամ կին, վոր բատրակությունից  
նոր եր վերադարձել մալականների մոտից ու  
խորհրդային իշխանության չնորհիվ հող  
ստացել, մի փայտ ձեռքին հարձակվեց Զա-  
հանդիր բեգի վրա ու հարվածեց նրա ձիուն:  
Չին ծառս յեղավ ու իրեն մի կողմ չպրտեց:  
Տեսնելով Ալմաստի քաջությունը, մյուս կա-

Նայք ու տղամարդիկ ել միացան նրան և հարձակվեցին Զահանդիր բեգի վրա:

Տեսնելով այդ դրությունը, նա հազիվ աղատվում է, մտրակելով իր ձին հասնում ե Փիր-Աբասին, վոր ցարիզմի ժամանակ յոթ տարի տանուտեր եր յեղել: Փիր-Աբասը ուրիշ շեյխերի ու կուլակների հետ զալիս և համոզելու ամրոխին: Շեյխերը զուրանն են մեջ բերում, ապացուցելու, վոր մեծավորի դեմ չի կարելի գնալ, վոր այդ շատ մեղք է:

Հասոն կանգնելով մի մեծ քարի վրա, սկսում ե ճառել:

— Ընկերներ, — մենք եսոր ևեթ մարդ պիտի ուղարկենք Յերևան, Մստոյի մոտ, թող գնա հայտնի ուր հարկն ե, զան զինաթափ անեն բոլոր բեգերին ու կուլակներին ու գյուղխորհուրդ կազմակերպենք, ու վոչ թե բեգերի իշխանությունը... Դուք բոլորդ ել լինում եք հայ ու թուրք գյուղերում, ամեն տեղ ել հիմի վոչ թե տանուտերներն են, այլ ընտրովի գեղխորհուրդ, իսկ մեղնում բեգերը դեռ խեղդում են մեզ:

Ապա նրա տեղը գրավում ե Ալմաստը.

— Մենք սրանց ել պիտի ուտեցնենք Զահանդիրի նման: Սրանք դրա պոչերն են, սրանք միշտ ել քոմակ են կանգնում բեգերին: Մեր սկ որը գրանց ել ա ողուտ:

Շատերը խոսեցին, պահանջեցին վոնդել Զահանդիր բեգին:

Մեկը, վոր նոր եր հասել քոչվորների

քարվանին, հայտնեց թե Մստոն արդեն գյուղումն ե, նրա հետ և շրջգործկոմի նախաղահ Զոնաղջանը ու ելի մի քանի հոգի, նրանք ուղում են գյուղիխորհուրդ ընտրել, բայց վորովհետև ժողովուրդը ձմռան քոչի յե գնում, նրանք գնացին նստակյած քրդերի մոտ: Մի շարաթից հետո յել մեզ մոտ կդան: Ալիխան բեգին հանել են պատոնից, բայց շեյխերը, փիրերն ու ավագանիները դեմել են ժողովուրդին, մոռ նորից Ալեքսանին պահանջեն, վոր յանի մենք դեռ գյուղիխորհուրդ չենք ուղում:

— Բա վերջն ինչ ա լինելու, — հարցըրեց Արասը:

— Ես Մստոյի դործն ա, վոր դրան ռադչանենք, մեր բանը փիս ա ըլելու:

Շեյխերն ու կուլակները Փիր-Աբասի գոլխավորությամբ մերադարձան քարվանի մոտ ու պատմում եյին գյուղից նոր լսած լուրերը:

Մյուսներն ուրախացել եյին իմացած նորություններից: Աղիդ բեգը նույնպես լսել եր գուտի նորություններո, բայց յավ տեր հասկացել և նա ուղում եր իմանալ ամեն ինչ մանրամասնորեն, սակայն նրան չեր հաջողվում տեսնելու նորեկին ու խոսել:

Բուրրո մստենում եյին Բողություն լեռան, վոր նման եր շաքարի գլխի: Նրա գտաթը յերեխնք եր սլանում, տարածելով իր անշարժ թիերը, վորոնք, թվում եր թե կպել եր յեկնակամարի մուղկապույտին:

Այս լեռան տակ քոչվորը կանգ առավ գի-

չերելու։ Արդեն վառվել եյին խարույկները  
ու նրանց վրա զրված զազանների մեջ զառւր-  
մա եր պատրաստվում։

Մանր բեռից ազատված ձիերն ու յեղներն  
այդտեղ իսկ արածում եյին։ Կանայք շտա-  
պով քանդում եյին բոխչաները և քոչմեքը  
փոռում դետնին։ Թեթև ընթրիքից ու աղբյուրի  
սկադ ջրից հետո, նրանք մեկնվեցին քնելու բաց  
յերկնքի տակ, վորպեսզի լուսինը յերե-  
վալուն պես շարունակեն իրենց ճամբան։

Այդպես գնում եյին նրանք յերկու որ։  
Յերրորդ որը կանգ առան մի քարանձավի մոտ։  
Այստեղ, մոտավորաանս հինգ մերսոտ տարա-  
ծությամբ, աղեղնաձև ձգվել եյին քոչվոր-  
ները, վոր կարգի դցեն իրենց ձմռան քոչի  
տեղը։ Հենց հասել եր բեգի կոռի ժամանակը։  
Աղիդ բեգը պատվիրեց ծառաներին կանչել  
ժողովրդին իր տավարի ձմռան տեղերը հար-  
թելու։

Նույն կարգադրությունն արեց և Զահան-  
գիր բեգն իր ցեղին։ Զքավորն ու միջակը, վոր  
զեռ վոչինչ չեյին հասցըել անել իրենց ու տա-  
վարի համար, թողնելով իրենց վողջ ընտա-  
նիքը՝ կանանց ու յերեխաներին բացոթա, բահ  
ու քլունգով զնացին բեգի կոռին։ Նրանք,  
վորոնք չեյին գնում կոռի, հավաքված Հա-  
սոյի շուրջը, թութուն եյին քաշում ու մտա-  
ծում իրենց անելիքների մասին։ Աղիդ բեգը,  
մտրակը ձեռին անցավ Հասոյի մոտով և ըս-  
պառնական նայեց նրա շուրջը բոլորված չքա-

մորներին ու միջակներին։ Նստածներից և վոչ  
մեկը չկատարեց աղաթի պահանջը՝ վոտքի  
յելնել բեգի առջեւ։

— Բան չկա, վեր թափմեք ըստեղ, ասաց  
Աղիդ բեգը, ես ա յես ձեզ ենպես հնազանդեց-  
նեմ, վոնդ վոր ձեր հերերն ու պապերն են եկել։  
Դուք հենց գիտեք շա՞տ ա քաշելու ձեր աղա-  
տությունը։ Քիչ ա մնացել, ես ա անդլիչանն  
ու դաշնակը ձեր կաշին մակելու յեն ու ձեղ  
հետ նստող կոնցոմոլին ել հետը։

Վոչվոք չպատասխանեց։ Նա անցավ։

Այն տափը, ուր կանգ է առնում քոչը,  
գարնանը բոլորովին ամայանում է, տափարը  
սարն է գնում ու այդ տեղում շատ հյութալի  
խոտ է բուսնում, ու դրա համար է, վոր ամ-  
րող ձմեռը տափարը այստեղ է արածում։

Գյուղից ստացած նորություններից հե-  
տո, բոլոր կուլակները, չելիսերն ու ծերերը  
ժողովվում ելին Աղիդ բեգի մոտ ու խորհր-  
դակցում։ Մի կոմյերիտական մոտեցավ կոռ  
անողներին իր ծխախոտը կպցնելու։

— Արի բանիր, ի՞նչ էս թրե գալիս, Հո  
մենակ մենք չենք բեգի նոքյարները, ասաց մի  
աշխատող ծերունի։

— Յես իմ թշնամու համար յերբեք չեմ  
բանի, ասաց կոմյերիտականը։

— Նա մեզ ի՞նչ թշնամի, ատարակուսան-  
քով հարցրեց տուածին խոսակիցը։

— Յես քեզ կասեմ թե ինչ թշնամի ա ու դու  
յել մեկելներին պատմի ու գլմի գցի, վոր

կովեն մեր եռ թշնամիների գեմ։ Յեթե միանք, ձեռ-ձեռի տանք, մենք դրանց հախիցը կդանք, մեզ քոմակ են կոմունիստներն ու խորհրդային իշխանությունը։ Դրանից հետո նոր մենք մեր գլխի տերը կլինենք ու ոչով մեր քեֆին չի դիպչիլ։

— Յես ելի դիմի ճնկա, թե մեր թշնամին ո՞վ ա-հասցեղ ծերունին։

— Մեր թշնամիքը-մեր բեդեռը, մեր ա-զարարները, մեր մոլիքը, շեյխերն ու կուրիշներն են։ Հին աղաթոսի նրանք շարունակում են մեզ շահադրծել ու բանեցնել։ Հրեն տաղերը մոտ են, անձրև ա դալու, երեխանցը թրչելու ա, դեռ քու դադեն չքաշած, եկել ես բեդերինն ես սարքում։ Խովես ապրել եմ չի լինի։ Մեր աղաթը ասում ա՝ պետք ա հնազանգվել ամեն մի բեդի, աղայի, շեյխի ու հարուստ մարդու վոչ թե նրա խելքի ու բարության համար, այլ նրանց բեդության ու հարստության համար.-դրանից ա առաջանում անսրդտոռությունն ու չքալորի ցավ ու դարդը։ Մեկի կոնը տրաքում ա բարիքից-հարուստ ա, մեկելը մի սարամաթ շապիկ-փոխան չունի։ Պետք է փոխենք մեր աղաթները, հանդի շեյխերին, վոր միշտ քարոզում են թե՝ «Հպատակներ ձեր մեծ բնուելն», բեդեռն եւ թե՝ «Զհամարձակիմեք շեյխերի սրբության դեմ բան ասեք»։ Դե բան եւ ատեւ թե ձե՝ բեդր ձիպոտի տակ ա քաշում։ Խոենցով իրար պահում-պահպանում են ու խալիք բանացնում

Արանց համար։ Եղ բեղերի, շեյխերի ու մոլով-քի հնաբած որենքներն ու աղաթները պիտի փոխել ու ենպես որենք սահմանել, վոր մենք եւ կարենանք ապրել ու պաշտպանվել բեգի ու կրոնավորի խեր ու շառից։ Ի՞նչի մի հատ եւ ա բեդ, շեյխ, յա մոլլա չկա, վոր աղքատ ըլի, -չունքի վոր նրանք ինձ ու քող բանաց ել-լով են ապրում։ Շատ ժողովրդներ են մեզ պես սկսել իրանց կյանքը, տեղից տեղ քոչել, վոչ-խար ու տավարով ապրուստ արել. բայց նը-րանք վախտին են գլխի ընկել, խելք արել, նստակյաց կյանք են ակսել, հող վարել, հայ ցանել, քաղաքներ շինել։ Իսկ մենք առաջվա-պես բեդերի խոսքով ենք ժամ գաւիս ու բա-նում նրանց համար։ Եղ մեկ ա թե՝ մի հեր յերկու վորդի ունենա ու մեկը ծնվի որորոց մտնի, չորեքթաթ անի, հետո յել վոտ առնի, մեծանա, զառնա կարգին տղամարդ, իսկ են մեկելը հենց ընենց ել որորոցումը մնա։ Այ, մենք եղ մեկել վորդու նման ենք։ Ինչ ծնվել ենք, ե՛, քանի հարյուր տարի ա, իսկի չի յել համարի, հեշ չենք մեծացել, ու միշտ որորողի մեջ ենք մնացել։ Համա վախտն ա,-վոր մենք ել վոտ առնենք, մեծանանք ուրիշ ժողովրդ-ների նման ու նրանց նման ապրենք։ Մեր որեն-քով քուրդը կոնի մեջ պետք ա ապրի ու են կոնն ել պիտք ա ըսենց խփի ու վոչ թե ուրիշ կերպ, թե չե՝ նրա սաղ գերգաստանը կկոր-ծանվի ոջախի ուրիշ տեսակ սարքելուց։ Եղ բոլորը սուտ ա։ Ադ ինչից ա, վոր իրանք բե-

գերն ու չեյխերը իրանց ուղածի պես են խփում  
իրանց կոները ու նրանց բան ելա չի պատահում, իսկ մեզ համար մեղք ա համարվում...  
Ասում են ամեն ցեղ ջոկված պիտի ըլլի ու թե մեկը մեկելի խաթրին կպավ, սաղ ցեղով ու տեղով պտի դուրս գան վրեժ լուծելու, արյուն պիտի թափեն ու եղակս անվերջ: Ախր եղ խոռվությունը, կուիլն ու արինահեղությունները, ձեռնրտու յեն բեզերին ու աղալարներին, նրանք են եղ անհամությունների պատճառը: Ժողովուրդը թշնամություն ե անում իրար, նրանք մեկ-մեկու կոտորում են, իսկ բեզերը փեշքաշներ ա վոր ստանում են: Իսկ եղ սպանության պատճառը ելի Աղիդ բեզը չե՞ր: Ողորմածիկ Դրբոն յարալու ելած, յերբ գեռ շունչը վրեն եր, պատմում եր, վոր Ղազանցիք նրան սպանելու միտք չունեյին, Աղիդ բեզի արածն եր, վոր նրանք հարձակվեցին իրա վրա ու յարալու արին: Հիմի յել փեշքյաշներ ա,-վոր ստանում ա բեզը յերկու կողմիցն ել, վոր արդար դուրս բերի, ու փեշքյաշը ստանում ա արդարիցն ել, մեղավորիցն ել: Ինչքան անքախության պատճառ են դառնում դրանք: Մեր որենքով, ամենածանր աշխատանք անողը կինն ա: Դրանից ա, վոր մեր կնանիքը չուտ են ծեռանում: Այ, քու ախպերը պառավել ա ու մինչեւ հիմա չի պսակվել, ինչ ա, թե չքափոր ա, ղալիմի փող չունի, իսկ բեզերը: Հրեն Աղիդ բեզը յերեք կին ունի ու ել յեղ նորից փողի զոռով նադոյի տաօներկու տարե-

կան աղջկան ա առել: Պահանգիր բեզի Հորեղաբայր Ղամըլուեցի Ալի-Բարասիլ ողլին 56 տարեկան ա ու թահարի 14 տարեկան աղջկան առել ա իրան կնիկ՝ ղալիմ տալով: Իսկ չքափորը եղ աղաթի պատճառով անպսակ ա մընում ու անպսակ մեռնում: Ո՞ւմ հնարածն տեղ որենքը: Ո՞վ ասավ, վոր հարուստը միքանի կին պիտի ունենա, իսկ մենք քյամիբներս՝ չե: Եղ տեսակ որենք ու աղաթները բեզերն ու չեյխերը իրանց համար են հնարել, հնարել են վոր մեզ զրկեն:

— Մստոն հո ամեն ժողովին ղալիմի դեմ ախոսում, -ընդհատեց կոմյերիտին ծերունին, -ու մենք բոլորս ել ձեռք բարձրացրինք, մենք ուղում ենք վաշնչանա ղալիմը, ժողովուրդն ազատիկ եղ լուծից: Ամառը, Ալագոյզի քըրդի համագումարին ել մենք մեր կանանցով ու յերեսեքով պահանջեցինք վերացնել ղալիմը:

— Բա բեզերը ի՞նչ եյին ասում, -հացրեց կոմյերիտը ծերունուն:

— Ինչ եյին ասում: Ասում եյին չի կարելի, անհնարին ա, մեղք ա, ասում եյին, վոր Մստոն ղավաճանում ա մեր հավատին ու կրոնին, ոսի կնիկ ա առել, բեզը վեր արել: Կը քանի որն ել, -ավելացրեց ծերունին, -բեզերը հավաքվել եյին ու խոսում եյին, թե զերը հավաքվել եյին ա խոսում եյին, վոր նրանց հանել ա փոնց սպանեն Մստոյին, վոր նրանց հանել ա փորհրդային աշխատանքից ու դուրս ա հանում ժողովներից:

Յերկուսն ել լոեցին։ Կոմյերիտը մի քիչ մտածեց, հետո գրանից մի թուղթ հանելով կարդաց, վոր ղալիմը որենքով վերացված և և վոր ձարսնացու առնողները տուգանվում են 500 ռուրլու աշխանում։ Բացի դրանից, ան-չափահաս աղջիկներին ու տղաներին իրա-վունք չի տրվում ամուսնացնելու, մինչև աղջկա 16 տարեկան, իսկ տղալի՛ տասնութ տարեկան լի նելր։ Մեծերն ել, վոր ամուսնում են, աս-րիքի մեջ տասից ավել չպետք է լինի տար-բերությունը, լինի դա տղամարդ թի կինար-մատ։ Նույնպես վերացվում ե բարմակնու-թյունը։ Վոչ վոր իրավունք չունի մեկից ա-վելի կին ունենալու։

— Այ, թե հա՞... ուրախ բացականչեց ծերունին ու իր թին ցած ցցեց։ Նրանց մոռե-ցան մյուս կոռ անող քրդերը։ Ծերունին խնդրեց կոմյերիտին նորից կարդալ դեկրետը։ Նա կարդաց ու մանրամասն բացատրեց։ Բո-լորն ուրախ եյն և ուրախությունից ծիծա-ռում եւին։ Մեկը կանչեց. «Յաշամիշբե՝<sup>1)</sup> Մստոն»։ Նրանց ծիծաղն ու աղմուկը հասավ Մեջիդ-բեզի ականջը, նա յելավ ու մոտեցավ ամբոխին։ Կոմյերիտը շարունակում եր եր ընդհատված խօսակցությունը։

— Իսկ յերկրորդ մեր թշնամին, այ ևս սարերն են, — ասաց մատնանշելով Ալա-դյողը։ Հ'ը, հա՛, ի՞նչ ես եղակս մտիկ տալիս ինձ։ Ալա

դյողը մեր մերն ա, մեզ ապրուատ տվողն ա, դրա հետ միասին՝ նա մեր ամենամեծ թշնա-մին ա։ Անխելք մոր նման նա յերես ա տալիս իր երեխին, աշխատանքի չի սովորեցնում, հետո յիշ չարանում ա ու փետն առնում-ծե-ծում։ Ալադյողն ել եղակս յերես ա տվել քրդին, սովորեցրել ա նրան ծույություն, ու քորդը են ժամանակ ա մտածում հողագործության մա-սին, յերբ վոր ձյուն ա գալիս ու փոչխարը կոտորվում ա։ Յեթի քրդերն ել հայերի պետ հողագործ լինելին, ուղեցին-չուղեցին կաշխա-տեցին ու ալելի հանդիստ կազրելին։ Տակարը կեր ուղեր, բայտ կցանեցին։ Մի տեղ բենա յենք զնում, հետո թողնում, քոչում։ Զմեռն առանց ջրի առնջվում ենք։ Դուք ել, ձեր երե-խեֆն ել քոչվորության պատճառով անդրա-գետ եք մնում։ Վոր մի տեղ նստեք, ուսում-նարան կունենանք ու գիր կոսվորեք։

Յերկու յերիտասարդ չորան՝ զպրոցի ո-նունը լսելուն պես, ուրախացած իրար նայե-ցին։

— Հը, Զիմաթ, դրուստ չե՞մ առում, վոր մեր առաջին թշնամին բեզն, աղայարը, շեյսն ու մոլան ա, յերկրոբե՛ մեր քոչվոր կյանքը։ Ախր, կարեիի յա եղ բոլորի հախիցը գալ, յե-թի վոր լավ մտածենք ու միասին գործի կըպ-չենք։

— Դրուստ ա, դրուստ, միաբերան ասու-ցին չքավորները, նայելով կոմյերիտի նիհար գեմքին։

Մաջիդ-բեղը տեսնելով կոմյերիտին, մոտեցավ նրան ու խիստ հայացքով չափելով նրան վոտից գլուխ, գռոաց.

— Դու ի՞նչ ես սրանց եսքան վախտ բանից դցում: Եթե գուշը չտեսնեմ մեր որայում, թե չե վիզդ կհոլորեմ:

Կոմյերիտը չկորցնելով իրեն, պատասխանեց.

— Քու որեն ժաղուց ա, վոր չկտ: Հրեն այ քու որեն, քեզ շնուռով ընտեղ ենք քշելու, -ավելացրեց նա, մատնանշելով քարանձավը:

Մաջիդ բեղը ոճի պես ձգվեց ու առնելով մտրակը, հարձակվեց կոմյերիտի վրա: Այս տեսնելով, աշխատող չքավորները ձեն տվին.

— Եղ չանես բեզ, թե վոր ջիվանին դիպել ես, մենք բոլորովս պաշտպանելու յենք զբոն, փիս բան դուրս կդա:

Մաջիդ-բեղը գլուղացիների այդ խոսքերից կանգ առավ, սեղմեց խանչալի դաստակն ու չարությամբ նայելով աշխատուղներին, մոմոց՝ «Համբերեք դեռ, վախտը կդա, յես ձեղ՝ շուն-շանվորդկերանց շանց կտամ»:

Կոմյերիտը հանգիստ տուն գնաց: Որն իրենանում եր: Արեի դեղին տապը փուլել եր զոերի վրա: Յերկնքում յերեւմ եյին մի կետում ստուծ արծիւների ուրվագծեր, վորոնք հայացքները դետին մխած, վորս եյին վորոնում: Ղոերում ժամանակ առ ժամանակ լրավում եր մի վայրենի, հյուծված վշտու ու

թախծու ճիչ տնքում ե լեռնային արծիվը: Կոմյերիտի հետ զրուցող ծերունին շառունակ մտազրաղ աշխատելով, քիչ եր մնում վնասեր իր վոտքը: Բեգերի ու նրանց ազգականների վրանները շինված-պատրաստ եյին, պատրաստ եր նույնպես նրանց տամարի ձմռան կանգնելատեղին, բարձր ցանկապատած: Մեկնեցին իրենց վրանները նաև կուլակներն ու չեյլսերը: Հորիզոնի վրա յերեաց մի սև ամպ, վորին քամին քշում եր քոչվորների վրա, ու արել մթնելուց առաջ հորդեց ուժեղ անձրի: Կոռ անող չքավորների յերեխաններն ու իրերը թրջվեցին մինչև տակը: Անձրեի հետ փչեց նաև աշնանային սառը քամին: Յերեխանները սառչում եյին ցրտից, դողում ու ատամ-ատամի տալիս: Մութն ընկալի ու անձրին ել դադարեց: Կուլակների, բեգերի ու չեյլսերի յերերեց խանները չոր ու ցամաք, դուրս յեկան իրենց վրաններից ու կրակի շուրջը նստած՝ ձմռան քոչն եյին յերդում, ուրախունում ու պարում: Զքավորների թրջված յերեխանները կարպետներով փաթոթված պառկած, լսում եյին ու յերանի տալիս նրանց...

Կոմյերիտին լսած չքավորները հիշեցին նրա խոսքերը և գեղուհությունը, անեծքն ու հայոյանքը բեգերի հասցեյին լսվում եր մինչև լույս: Թրջված յերեխանները ցրտից լաւ զուվ ու դողալով լուսաղեմին միայն կարողալով ու դողալով լուսաղեմին միայն կարողալով: Բնեցին և ցան աչք խփել բաց յերկնքի տակ: Քնեցին և ցան աչք խփել բաց յերկնքի տակ: Քնեցին և ցան աչք խփել բաց յերկնքի տակ:

ներն ու կուլակները վաղուց ելին քուն մտել  
ու խռմացնում տաք վերմակների տուկ:

Բացվող արեը լուսավորեց արոտախոտե-  
րի կանաչ թափիշը: Դեղնաչյա ու դեղնագան-  
գուր գեղեցկուհին՝ զները մեկնվել եր ժպիտը  
դեմքին: Ղոերը մոայլ ու դաժան են ձմռան  
դիշերվա պես: Ղոերը ռազմադաշտի պես լիքն  
են մարդկանց ու կենդանիների վասկորներով:  
Այսուղ զոերում զաշնակների որոք թափնր-  
գում ելին թուրքերն ու բրդերը, նրանց թը-  
զում կային մեկուսի հեղափոխականներ, վոր  
շհաղանդվելով դաշնակի մառզերին, կապ-  
վել ելին մասսային:

Զման քոչից վոչ հեռու Մրդատ-կախ  
լիճն եր: Նա գոյացել եր անձրեներից և հոսում  
եր քարի նեղ ճեղքերից ու բավարարում քոչ-  
վորի կարիքը:

Լույսը բացվեց, արեը բարձրացավ: Տա-  
վարը ուրախ բառաչել սկսեց, ձիերն ել՝ խըր-  
խընջալ՝ յերկարառե հանդիսատ ու լիառատ կեր  
ունենալով: Կանայք ուրախ-ուրախ զբաղված  
ելին իրենց սեփական զործերով, վոր յերեկ  
կոռի պատճառով չելին հասցըել անել: Կոռ-  
լակները հանդիսավոր զբանում ելին՝ դա-  
դար տալով թամբերում թմրած անդամներին:  
Զբավորները քարերը տեսահան անելով, անդ  
ելին հարթում իրենց վրանների համար, իսկ  
յերեխաններն իրենց մատղաշ զառներով ու շնե-  
րով նոր արոտներն ելին զնում:

Զահանդիր բեգը տեսնելով, վոր Ուսուր-

բեգն ել և յեկել ձմռան քոչի, խոկույն պտո-  
վիրեց ծառաներին ձի թամքել. նա ուղում եր  
վորքան կարելի յե շուտ տեսնել Ռւսուր բե-  
ղին ու պատմել նրան այս որերին իր գլուխն  
յեկածը...

Ուսուր բեգի ցեղն ալելի լավ տեղ եր  
գրավիել, քան Զահանդիր բեգինը: Փոքր ձորա-  
կում տեղավորվել եր «Կախ» լիճը, նրա աջ  
ափին փուլել ելին զույնզգույն յուրթերը:  
Բլրի ոլիսին սեին եր տալիս միակ մեծ սե-  
յուրթը, վորի կողքին ձգված եր Ուսուր-բեգի  
սպիտակ վրանը: Զախ թեկի լանջերում արած-  
ում եր նրա վոչխարն ու տավարը:

Զահանդիր բեգն արագացրեց ձիու քայլն  
ու սկսեց իջնել նեղ, վոլորապտույտի դանդա-  
գապատ<sup>1)</sup> արահետով դեպի լիճը: Ու հան-  
կարծ կանդ տասվ: Բոլորովին մոտ, քարերի  
հետեկց նրա տկանջին հասավ մի ծիծաղի  
հնչյուն: Քրդուհիներն ելին ծիծաղում: Զա-  
հանդիր բեգը խիստյն ցած թռավ ձիուց ու  
վաղեց դեպի ձայնը:

Մի քանի պտույտից հետո, նեղ արահետը  
վերջացավ, բերեց նրան լճի նեղ ծայրին,  
վորը մեջտեղից բաժանված եր անձրեներից  
զոյացած բավականին խոր առվով: Այս ա-  
ռուն միացնում եր լիճը բլրի տակի ջրամբա-  
րի հետ: Քրդուհիները ջուրն այսուեղից ելին  
վերցնում, վորովհետե ջուրը մնալով ժայռի  
տակի փոսի մեջ, ավելի սառն ու պարզ եր

1) Հանդագ դահրամ բռնանող խօս:

լինում, քան ավերին, ուր պղտորում եր ջրվող  
տավարը:

Ջրամբարի մոտ, մեջքով դեպի ճամբան,  
կանգնած եր Մայանեն, կապույտ անթարի  
հազած: Կլոր գլխարկի՝ կոփի տակից, նրա  
վեր պարզած սիրունիկ գլխից կապույտ ան-  
թարին եր իջնում. 14 բարակ ու յերկար սև  
հուսեր, վորոնք ցնցվում եյին, յերբ Մայա-  
նեն ծիծաղում ու չարաճճիրեն թափահարում  
եր գլուխը: Նրա զիմաց, ձեռները մեջքին  
կանթած, կանգնած եր մի յերիտասարդ քուրդ:  
Դեղիցիկ ժպտալով բացել եր իր սպիտակ,  
խոչոր ատամները և ակնապիշնայում եր Մայա-  
նեյին: Քուրդը աղքատ հագուստով եր, կար-  
կատած արխալուղով, մաշված գլխի չալմո-  
յով ու բորբիկ վստին հազած տրեխներով:  
Նկատելով Զահանգիր բեգին, նա ինչ վոր  
բան առաց Մայանեյին ու կուանալով սկսեց ջուր  
լցնել կուժր: Մայանեն յետ նայեց ու հանդի-  
պեց Զահանգիր բեգի հայացքին: Նա նախ  
կարմրեց, ապա կունատովեց ու ժպիտը կորավ  
նրա վարդագույն դեմքից:

Զահանգիր բեգին թվաց, թե նրա սիրտը  
ցնցվելով կանդ առավ: Նրա Մայանեն այս  
սրիկա քնձոտու հետ: Չարությունը սեղմում  
եր նրա կոկորդը: Ատամները կրծտեցնելով,  
նա մոտեցավ քրդին և խլելով նրա ձեռքի կու-  
ժը, կոտրեց այն նրա գլխին: Ապա բռնելով  
նրա ուսերից, չըջեց ու հրեց նրան այնպիսի  
թափով, վոր նա ընկավ յերեսի վրա:

— Չես Ճանաչում տեղդ, ոգոռաց խզված  
ձայնով Զահանգիր բեգը: — Դե ուադ յեղիր,  
քանի չեմ սպանել քեզ չան պես:

Քուրդը վեր կացավ, սրբելով իր յերեսն  
ու դարձավ Զահանգիր բեգին.

— Շունը դու յես ու քու հերը, ոգոռաց  
նա զայրացած և ապա մի պահ մտածելով,  
արագ վազեց, քարից քար թռչելով:

— Մայանեն, կանչեց Զահանգիր բեգը, ու  
նրա ձայնը բեկվում ու ընդահտվում եր, —  
Մայանեն, դու մոռացել ես, վոր դու իմ հարս-  
նացուն ես: Դու ինչպես ես կարողանում խոսք  
ու ծիծաղ անել եղ վողորմելի չորանի հետ,  
քանի վոր մի յերկու չարաթից հետո յես զա-  
լվմ եմ զրկելու քու հորը:

Ի՞նչպես կարող ես ուղարկել, հիմի դա-  
լիմը վերացած ա, զարմացած հարցրեց Մա-  
յանեն: Չե վոր խորհրդային որենքը քեզ կձեր-  
բակալի:

Բան չկա չեն ձերբակալի, դալիմը  
ենպես թաքուն կտամ, վոր ոչով չի իմանալ:

— Զահանգիր բեգ, ասաց Մայանեն, եղ  
տղան մեր չվանն<sup>1)</sup> ա, նա ջուր եր վերցնում  
եստեղից:

— Բա վոր մերոնցից մեկն ու մեկը տե-  
սե՞լ եր:

Բամբասանքը կնկներ բոլորի բերանը, յես  
ստիպված կլինեյի մեր հարսանիքը խափանել

ու մեր ցեղերը պետք և թշնամանային իրար էնտ:

— Մեղա քեղ խուսդե, նա Հռ հասառակ շվան չի<sup>թ</sup> վոր: Նա յել լավ ոջախից ա, նրա հետն ե, մեր Հասանի սաղ ոնդի Մերիսսան այիդել: Փոքրուց մենք միասին ենք մեծացել: Իմ հերք վեցրեց նրան իրա իդիթության համար: Ղաջաղներո վոր վրա տվին մեր ապրանքին, նա ինքը մենակ յետ քշեց բոլորին: Բայց վոր ուղում ես, յերգվում եմ Փիր-Առասի սջաղով, վոր ել նրա յերեսին մտիկ չեմ տալ:

Մայանեյի խոսքերը մեզմացրին Զահանգիր բեղի չարությունը ու նա մեզմությամբ ասաց.

— Դե, լավ Մայանե, ես անդամ բաշխում եմ քեդ: Յես հայտառում եմ, վոր ես առաջին անդամն եր ու մերջինը կլինի, իսկ եղ սրիկային իմ ծառաները ուսդ կանեն այստեղիդ: Եղ աղքատ չփաղը կրակի հետ ա խաղ անում: Դե, սըրիր աչքերդ մի լար, յես ուղում եմ, վոր յերեսդ փայլի արեդակել աես:

Ու նրանք հաշտվեցին: Մի կես ժամից հետո, Մայանեն կուժն ուսին, բարձրանում եր սարն ի վեր, իսկ Զահանգիր բեղը մերադարձավ այն տեղը՝ ուր նա թողել եր իր ձին: Բայց ձին վոչ մի տեղ չկար: Զահանգիր բեղը գլխի ըկնավ, վոր իր կողմից վիրավորված քուրդը փախցրել եր իր սիրած ձին, բայց ինքն ստիպված եր լոել ու մարդ չուղարկել փախստականի յետեից: Նա ստիպված վոտքով յեկավ

Աւառւբ-բեղի վրանը: Քրդերը իսկույն իմացան յեղելությունը, չքավորներն ուրախացած եյին ու դովում եյին կղիթի արարքը:



Ալա-գյողի ստորին լանջերին, Ղըլ-Սոր կարմիր բյուրեներով շրջապատված՝ կուչ ե յեկել Սյեյթանի Ղըաղ գյուղը: Փոփոխական քամին փչում եր մերթ Սարգարադի դաշտից, մերթ լիոներից: Այստեղ այնպես չեր նեղում շողը, ինչպես դաշտում: Ամբողջ գյուղը դուրս եր գալիս վրաններից և քարերին նստառած՝ զրույց եյին անում վոչխար ու տավարի մասին:

Բրոն վորբացավ: Հայրը թողել եր նրան 20 վոչխարից, մի յեղից ու ձիուց բաղկացած մի վոքը տնտեսություն: Նրա մայրը՝ Բասեն հաճախ ասում եր. «Բրոյի հերը մեռնելիս կտակ արավ, վոր իրա քրտինքով չահած վաչխարը զալիմ տամ ու վորդուս պասկեմ»: Յեվ նա մեծ հոգատարությամբ ինամում եր մալերը և նրանք դեռ գյուղ-չասած, պառավ Բասեն վազում եր նրանց ստուգելու:

Բասեն վաղուց հարսնացու յեր վնտրում եր վորդու համար, բայց չեր կարողանում գտնել, շատ զալիմ եյին պահանջում, իսկ նա հնարավորություն չուներ վճառելու: Բրոն մանկուց Մայանեյի հետ եր մեծացել ու նրանք սիրում եյին միմյանց: Բայց նա սիրտ չեր անում հայտնելու մորն իր ցանկությունը:

Մի որ մթնով, աշխատանքից տուն վերապառնալիս, Բրոն հանդիպեց Մայանեցին, վորտիուր ու մտահոգ՝ նույնպես տուն եր գնում։ Բրոն նրան տեսնելուն պես ժապտաց, վողջունեց, ու սեղմելով իր կրծքին՝ համբուրեց նրա թուշը, հարցնելով, թե ինչու յե թախծոտ նրա զեմքը, իսկ աչքերը լաց ու վշտով նայում աշխարհին։

Մայանեն պատմեց, թե ինչպես Զահանգիր բեգը ուղղում է իրեն կին առնի։

— Ես ազնիվ քոչվորի վորդի յեմ, — ասաց Բրոն ու յես չեմ փոխի իմ վորոշումը, — ու իմն ես։ Մենք միասին ենք մեծացել, մեր մանկությունը անց ենք կացրել Ալադյոզի քոչերում։ Լեռ-ժայռերի անուշահոտ շվաքում դու խոսք ես տվել ինձ ու հմի խոսքդ չե՞ս պահում։ Վոնց վոր տեսնում եմ, հորս մեռնելուց ու մեր աղքատանալուց հետո...

— Զե, չե, Բրո, յես քեզ եմ սիրում ու քոնն եմ։ Մայանեն հեղեկաց ու ընկավ Բրոյի գիրկը, — Համացավն են ա, վոր եղ ուրուր Զահանգիր բեգը աչք ա դրել վրես, — հերս ել չե չի ասում, ինչ ա հարուստ մարդ ա ու շատ զալմ ա տալիս։

Բրոն մտածմունքի մեջ ընկավ։ Նա լավ գիտեր, թե ինչքան դժվար ե ցեղապետի հետ բռնվելը, բայց ինդրեց մորը զալիմը վճառել։

Բասեն, ինչպես պահանջում եր որենքը, կանչեց Մայանեցի հորեղբորն ու ծածուկ վճարեց նրան զալիմը։ Այդ այնքան ել հեշտ

չեր անելը, քանի վոր որենքով զալիմն արգելված եր արդեն։

Հարսնախոսից ու զալիմը վճարելուց հետո փեսացուն պետք ե նվերներ բաժանի հարսնացուի կարեոր աղջականներին ու հաղթի նրանց նույնպես և սրախոսությամբ։ Բասեն նրա մայրը՝ ծալապատիկ նստած տեղից դիմեց յուր վորդուն ու ասաց։

— Դե բալա ջան, եկուց դու կնիկ ես առնելու։ Յես ինչքան կարացի, արեցի ու կատարեցի հորդ կտակը։ Հմի քու գլխի տերը դու յես, պետք ե լավ հասկանաս քու տնտեսությունը, ու վոր գլխավորն ա, վոչխարը կարենաս լավ պահել, չունքի նրանով են ապրել ու հմի յել ապրում են մերոնք։ Մոռացկոտ ու թեթևառիկ չինես, հպարտ չինես։ Թե գնացիր մի տեղ ու միաչքանի տեսար, զու յել միաչքանի դարձիր, վոր հարմարվիս են ցեղի խալխին։

— Լավ, այ մեր, — պատասխանեց Բրոն։

— Իսկ հմի զոնաղների դարդը քաշենք։ Բոլորին դրկեցի՞նք թոփային<sup>1</sup>)։ (Քրդական որենքն ե, վոր ամեն մի հարսանիք հրավիրագածին նվեր են ուղարկում «թոփայի»՝ մի աղյուս, մի կտոր սապոն և այլն։ Մասնակցել ուղողն ընդունում ե, չուզողը՝ վոչ։

— Հա, նանի, դրկել եմ։

— Բա թոփային հերիք արա՞վ։

— Հա, նանի, ախր հորյեղբայրդ ինձ

1) Նվերներ

Մի որ մթնով, աշխատանքից տուն վերապառնալիս, Բրոն հանդիպեց Մայանեցին, վորախուր ու մտահոգ՝ նույնպես տուն եր գնում։ Բրոն նրան տեսնելուն պես ժպտաց, վողջունեց, ու սեղմելով իր կրծքին՝ համբուրեց նրաթուշը, հարցնելով, թե ինչո՞ւ յել թախծոտ նրադեմքը, իսկ աչքերը լաց ու վշտով նայում աշխարհին։

Մայանեն պատմեց, թե ինչպես Զահանդիր բեգը ուզում է իրեն կին առնի։

— Ես ազնիվ քոչվորի վորդի յեմ, — ասաց Բրոն ու յես չեմ փոխի իմ վորոշումը, — դու իմն ես։ Մենք միասին ենք մեծացել, մերմանկությունը անց ենք կացը Ալաղյողի քոչերում։ Լեռ-ժայռերի անուշահոտ շվաքում դու խոսք ես տիել ինձ ու հիմի խոսքդ չե՞ս պահում։ Վոնց վոր տեսնում եմ, հորս մեռնելուց ու մեր աղքատանալուց հետո...

— Զե, չե, Բրո, յես քեզ եմ սիրում ու քոնն եմ։ — Մայանեն հեկեկաց ու ընկալ Բրոյի գիրկը, — Համացավն են ա, վոր եղ ուրուր Զահանդիր բեգը աչք ա դրել վրես, — հերս ել չե չի ասում, ինչ ա հարուստ մարդ ա ու շատ զալմ ա տալիս։

Բրոն մտածմունքի մեջ ընկավ։ Նա լավ դիտեր, թե ինչքան դժվար ե ցեղապետի հետքոնվելը, բայց խնդրեց մորը զալիմը վճառել։

Բասեն, ինչպես պահանջում եր որենքը, կանչեց Մայանեցի հորեղբորն ու ծածուկ վճարեց նրան զալիմը։ Այդ այնքան ել հեշտ

չեր անելը, քանի վոր որենքով զալիմն արգելված եր արդեն։

Հարսնախոսից ու զալիմը վճարելուց հետո փեսացուն պետք ե նվերներ բաժանի հարսնացուի կարեսը աղքականներին ու հաղթի նրանց նույնպես և սրախոսությամբ։ Բասեն նրա մայրը՝ ծալապատիկ նստած տեղից դիմեց յուր վորդուն ու ասաց։

— Դե բալա ջան, եղուց գու կնիկ ես առնելու։ Յես ինչքան կարացի, արեցի ու կատարեցի հորդ կտակը։ Հմի քու գլխի տերը դու յես, պետք ե լավ հասկանաս քու տնտեսությունը, ու վոր գլխավորն ա, վոչխարը կարենաս լավ պահել, չունքի նրանով են ապրել ու հմի յել ապրում են մերոնք։ Մոռացկոտ ու թեթևսուիկ չինես, հպարտ չլինես։ Թե գնացիր մի տեղ ու միաչքանի տեսար, դու յել միաչքանի դարձիր, վոր հարմարվես են ցեղի խալիսին։

— Լավ, այ մեր, — պատասխանեց Բրոն։

— Իսկ հմի զոնաղների դարդը քաշենք։ Բոլորին ղրկեցի՞նք թոփային<sup>1)</sup>։ (Քրդականորենքն ե, վոր ամեն մի հարսանիք հրավիրակածին նվեր են ուղարկում «թոփայի»՝ մի աղլուխ, մի կտոր սապոն և այլն։ Մասնակցել ուզողն ընդունում ե, չուզողը՝ վոչ)։

— Հա, նանի, ղրկել եմ։

— Բա թոփային հերիք արա՞վ։

— Հա, նանի, ախր հորյեղբայրդ ինձ

1) Նվերներ

ոխտը զարք բախչեց : Նա գիտեր, վոր մեր  
մեջքը զոռիլ չի:

Հետեւյալ որը Բրոյենց դշլաղը դժվար եր  
ճանաչել, շատ մարդ եր ավելացել ու անվերջ  
զլում եր զուռնա-դհուր: Շատ դոնաղներ եյին  
յեկել, Հասոն ու Ադեն ել եյին Հրավիրվուծ  
Հարսանիքի: Քրդերը, տոնական զույնզգույն  
արխալուղներով ու ոյմաներով, զարդարված  
չալմաներով, վրանից-պիրան եյին, անցնում,  
զրուցելով տոնական դվարձալիքների, իրենց  
գործերի ու զանազան նորությունների մասին:  
Յերեսում եյին նաև թուխ, լուռ ժարտացող  
կանայք՝ պիճնված տոնական ծանր զգեստնե-  
րով: Լեռնային գեղեցկուհիների գլուխները  
զարդարված եյին բարձր կոփիներով<sup>1)</sup>, նախ-  
շած զույնզգույն ուլունքներով: Վրանների  
մոտ, ուրախ ճիչ ու աղաղակով խաղում ու  
զվարձանում եյին ըորիկ յերեխաները:

Մեծ պատրաստությունները գյուղի մյուռ  
կողմն եյին, ուր իրենց ձիերով հավաքվել  
եյին թիրիթ անողները, ամեն մեկն իր ձիու  
առավելություններով եր պարծենում ու հա-  
վատացնում, վոր ինքը առաջինը կլինի: Շտ-  
երն ել իրենց ձիերի վկայականներն եյին  
ցույց տալի,՝ վակիրացված մի շաբք անձանց  
կողմից, ապացուցելով, վոր ձին զտարյուն  
կղլան է<sup>2)</sup>: Անհամբեր կենդանիները սահման

1) Գլիքի ծածկաց

2) Սրաբական տեսան է, վոր շատ դիմացկուն ու արագա-  
կաղ է:

կանգնել եյին՝ զեղեցիկ աղեղեյով վիզերնին ու  
արշավին սպասելով, սմբակներով հողը փո-  
քելով:

Վերջապես արշավիր հայտարարեցին: Տա-  
րածությունը տասը վերստ եր վորոշված և,  
մինչդեռ ձիավորները ջիրիթ անելով մոտե-  
նում եյին տեղին, զուռնան սկսեց «Քեյրե-  
Սուրյան»:

Այսպես զվարճանում եր ժողովուրդը:  
Բրոյին նստացրել եյին, ինչպես քուրդերն են  
ասում, թախտի (գահի) վրա, ջահելները  
շրջապատել եյին նրան, յերգում ու ուրախա-  
նում եյին, դուռին ածիլում: Քրդական սովո-  
րությամբ, նրա գլուխը բաժանել եյին մի  
քանի մասի ու ամեն ընկեր մոտենում եր գալ-  
լաքին, մձարում, վոր շուտ սափիրի իր զնած  
մասը: Գլուխ սափիրելուց հավաքված փողը  
ժողովվում եր մի տեղ, վոր իրար մեջ բաժան-  
վի հարսանիքից հետո:

Մայանեն նստած եր կոնում իր ընկերուհի-  
ների շրջանում: Նրանք զարդարում եյին  
հարսնացույին ու լաց լինում: այսպես եր  
պահանջում սովորությունը:

Աման, յես յադ եմ, աման անբախտ եմ,  
նստած ես բլրին արգունք եմ թափում,  
Ոչով չգիտե, թե ումոնցից եմ,  
Անբախտ ու ոտար, արցունք եմ թափում:

Են ով ա ոտար: Հերանցր տունը  
Հրեն կաթում ա անձրեւաջրից,

Հարսնացու մի լար, փեսացուդ ունի,  
Ջահել որ ու կյանք, յես՝ կարոտ յարից:

Գնամ ջուրն ընկնեմ, ել տուն չդամ յես,  
Բունս կորցնելու կարոտն եմ լացում.  
Ոտարը յես եմ, կարմիր ծաղկի պես  
Ուրիշի սրտի ուղածը դառնում:

Զոռ ու ցավ դառնար են կտոր հացը,  
Վոր ինձ ուտացրեց իմ սիրած նանին,  
Ու հիմի ես մեծ զալիմի համար  
Ինձ ջահել ծախում, քաֆթառին տալի:  
Մեկը յերգում եր ու յերբ վերջացնում եր  
մի տուն, մյուսները լալիս եյին: Նրանք վըշ-  
տացած եյին ձևանում, մինչդեռ յուրաքան-  
չյուրը մտածում եր.

— Ի՞նչ բախտավորն ես: Մարդդ ջահել ա  
ու սիրուն, իսկ մենք չենք իմանում, ով ա լի-  
նելու մերը: Կարող ա մենք վրա յերկու կամ  
յերեք կնիկը դառնանք մի փիս ու չար պա-  
ռավի: Են վախտը, վոր դրուստ լաց ըլենք, ու  
վոչ թե ադաթի համար...

Կեսորին Մայանեյին ձի նստացրին ու  
ծիավորներով շրջապատված տարան նրոյի  
տունը: Տանը մոտենալիս հրացանաձգությունը  
սկսեց, իսկ նրոյի մայրը առաջ գալով,  
քոչարի յեր պարում ձեռին յերկու ա-  
ման բռնած: Յերբ Մայանեն մտնում եր  
վրանը, շեմքին նրա վոտի տակ կավե

ամտն դրին, վորը նա կոտրեց ու այնպես ներս  
մտավ տուն: Մրանով վերջացավ հարսանիքի  
հանդիսը:

Հանդարտեց մարդկային աղմուկի ծովը,  
բոլորը ցրվեցին իրենց տները, ու ամեն ինչ  
լուց:

Ահա մի տարի յէ, ինչ Մայանեն ամուս-  
նացած է: Մայանեյի հաշվով տասյերեք լու-  
սին ե փոխվել այն որից, ինչ նա վոտ ե դրել  
նրոյի տունը: Յեվ որենքով սահմանված ժամ-  
կետը լրանայուց հետո եր միայն, վոր Մայանեն  
բացեց իր դեմքը ծածկող խելին ու խոսեց իր  
կեսրոջ-բասեյի հետ:

Բայց Ջահանդիր բեգը չմոռացավ գե-  
ղեցկուհի Մայանեյին: Նա ծառաներ ու-  
ղարկեց նրա հոր մոտ ու յերբ իմացավ, վոր  
աղջիկը ամուսնացել է, վորոշեց մի հարմար  
տեղ սպանել Բրոյին:

Ժամը ժամին, որը որին, ամեն ամիս-  
թուչում եր ժամանակը: Բրոն ապրում եր ու-  
րախ ու յերջանիկ իր Մայանեյի հետ: Մայրն  
ել ուրախ եր. կատարել եր հանդուցյալ ամուս-  
նու կտակը՝ պսակել վորդուն:

Գարնանանում եր: Արել առես թե վճռել  
եր կիզել վողջ աշխարհը ու հազարավոր բո-  
ցեղեն վոսկի ճառագայթներ եր ուղարկում  
յերկրին: Զմեռնաքոչի բոլոր քարերն ու դեղին.  
թումբերը շիկանում, հալ եյին ընկնում: Ղան-  
դաղն անհուն հրճանքով ու հեղությամբ  
բեղմնավորման կարստով խասմոխրագույն-

ծաղիկ ե հագնում ու իր ծաղիկների միլիոնա-  
վոր թերթիկները սփռում գետնովը մեկ:

Բրոյի տնտեսությունը հարսանքից ու դա-  
շիմ վճարելուց հետո սկսում եր նվազել: Բայց  
Բրոն այդ պակասությունները չի նկատում:  
Ֆերեկը նա դեռ ելի մի գործ անում ե:

Կարմրավուն ալիքավոր դուերը ննջում են  
մառ արևի տակ: Տենդոտ ջերմի մեջ տատան-  
վում ու ցնցվում է հորիզոնը: Լծի ավագոտ  
դեղին ափին պարզ յերեսում են Ռւսուբ-բեգի  
ու կոները, իսկ նրա շուրջը՝ խոտի խուրձերի  
նման թափված են մյուս կոները:

Նախիրը արածում ե քոչի մյուս կողմը:  
Զրին ավելի մոտ ձիերն են իրենց պինդ ու  
սպիտակ ատամներով պոկոտում հյութալի  
խոտը:

Ռւսուբ-բեգի գլխավոր կոնից մի քսան  
քայլ հեռու մի նոր վրան են ձգում հյուրերի  
համար: Նա լուր ե ստացել, վոց նրա մոտ են  
գալու դաշնակները, նախկին խմբապետները:  
Ենրկու խարույկ ե ծխում: Մեկը լավաշի հա-  
մար, իսկ մյուսի վրա Ռւսուբ-բեգի ծառուն  
շորան-զառւրմա յե անում, խալի պատրաս-  
տում: Տնեցիք ել են իրար անցել: Մեյրան խա-  
նումը, Ռւսուբ-բեգի կինը հետեւում ե ծառա-  
ներին, վոր ամեն ինչ կարդին լինի:

Ռւսուբ-բեգը հպարտորեն նստած ե փոած  
քոշմեյի վրա ու նայում ե գեղի դաշտը, վոր-  
տեղից պիտի յերեան հյուրերը: Կողքին նըս-

տած ե Զահանգիր բեգը, պատմում ե ճամբին  
պատահածը՝ քոչվորների խորհուրդ ընտրե-  
լու մասին:

— Դու գիտե՞ս Զահանգիր բեգ, իմ վոր-  
գուն պաշտոնից հանել են ու գնացել նստակ-  
յաց քրզերի մոտ, շուտով մեզ մ'ոտ ել կտան:  
Դու պիտք ե ենպես պատրաստես քու ցեղը,  
վոր բացի քեղանից ուրիշն չրնտրեն քոչվո-  
րական խորհրդի նախագահ: Աշխատիր, վոր  
քո չքավորները չեյխերի ու փիրերի միջոցով  
նախապատրաստված լինեն:

— Զե, Ռւսուբ-բեգ, մեր չքավորները ես  
անիծած Մստոյից հետո ենպես քաղաքակա-  
նապես պատրաստվել են, վոր բոլորն ել մեր  
զեմ են: Դու խկի գիտե՞ս, բանից յերեւում ա-  
ես ձմեռները Մստոն գալիս ա ելել, ժողովներ  
անելի, ամեն բան նախապատրաստել ու մենք  
բանից բեխարար ենք:

— Հա, -դրուստ ես տսում, Զահանգիր  
բեգ: Նա վոր մեր գեղն եկավ ժողով արեց, —  
մեզ չթողին, ձայնազուրկ հայտարարեցին ու  
առանց մեզ գյուղխորհուրդ ընտրեցին: Դրուստ  
ել առում ես, վոր բոլորն ել պատրաստված  
եյին ու գիտեյին թե ում ընտրեն:

Իրենց մաքերով տարված, յերկուսն ել լոե-  
ցին: Ռւսուբ-բեգը գոհ եր, վոր այսոր գայու յեն  
խմբապետները, վորոնց հետ նա տիրել ե  
Հայաստանին, կպատմեն անցած որերից,  
կհիշեն իր «հերոսությունները», իսկ վոր ա-  
մենակարևորն ե, նորություններ կհաղորդեն

այն մասին, թե յերբ են վաչնչացնելու այս  
անիծյալ բայլշեփերին:

Դուք գյուղից յեկած բատրակը, վոր հետր  
յերեք տիկ զինի յեր բերել, ասաց, վոր Սար-  
դարաբաղի դաշտում ձիավորներ են յերեւում,  
վոր ուղիղ գեպի քոչն են գալի...

Սարդարաբաղի դաշտը խնամքով պա-  
հանմ է իր ծովի հարստությունները և իր գաղտ-  
նիքները:

Ահեղ զորքեր են անցել իր ժամանակին:  
Նրա լայնքն ու յերկայնքը չափել ե դաշնակն  
ու թուրքը, ժողովուրդներ են գաղթել նրա  
վրայով, և բոլորին նա ընդունել ե անաչառ  
ու անկիրք, սառնասիրտ ու հանգիստ և նրանք  
մեկը մյուսի հետեւից անհետացել են դաշտա-  
վայրի անծայրածիր ծոցում: Ի՞նչ է յեղել այդ  
մարդկանց վերջը՝ լոկ ինքը գիտի...

Դեղին, ցանցառ բուսականություն ունե-  
ցող դաշտը, համբ լուսություն և պահպանում...

Թվում ե, վոր այս դաշտավայրում, ուր  
դաշտերն են փորել իրենց գերեզմանը, այժմ  
Սարդարաբաղի մեծ ջրանցքը անցկացնելուց  
ու լիովին վոռողելուց հետո, շատ քրդական  
ցեղեր կդանեն իրենց ապրուստի վայրը ու  
հետզհետե վերջ կտան քոչվորությանը այն  
քրդերը, վորոնց հայրերն ու պապերը հար-  
յուրավոր տարիներ քոչել են այս դաշտով:  
Իսկ այժմ դաշտում թափառող ժողովրդի միակ  
որորանն ե, քանի նրանք անջատ ու անկաղ-  
մակերպ են ու քոչող վոչխարի հոտի նման

չափչփում են լեռնային, անմարդաբնակը բա-  
ցատները:

... Քրդերի պարծանք արաբական կխլան-  
ները առաջ են սլանում ու նրանց հետ միասին  
քամու արագությամբ մեր անապատին ու լե-  
ռանը դիպչելով, դաշտ է հասնում նոր լուրը  
այն մասին, վոր ըրջգործկոմի նախագահ  
Ղոնաղչյանն ու Մատոն յեկել են քոչատեղերը  
ցեղալետներին իրենց պաշտոններից հանելու,  
վոնդելու բեգերին, վորոնք գեռ ցարից-  
մից ու դաշնակներից ժամանակից շահա-  
գործում են քուրդ աշխատավորությու-  
նը: Այսպիսով, բեգերի ավտոնում իշխա-  
նության անկումն սկսվում է միայն 1924  
թվից ու անցյալի փլատակների վրա,  
հին, ցեղալին կազմակերպության վրա  
առաջացան գյուղական և քոչվորական խոր-  
հուրդները, ուր մտան չքավորները, բատրակ-  
ներն ու միջակները: Բեգերը, վոր չհաշված  
կովերը, յեղները, ձիերն ու եշերը, յերկու  
հազարի չափ վոչխար ունեյին, մինչև 1924-25  
հազարի չափ վոչխար ունեյին, մինչև 1924-25  
թթ. վոչ մի կոպեկ հարկ չեյին տալիս խոր-  
հորդային իշխանության: Նրանց ապրանքը  
հաշվի առնվեց ու սկսեցին նրանք ել հարկ վճա-  
րել:

Լեռնային դոերը ծածկել են դաշտի զա-  
վակները: Վոչվոք ապահովված չի դոերի  
չար քմահաճույքից, վոչ վոք ոգնություն չի  
հասցնի անհատ չքավոր քոչվոր քրդին, յեթե  
նա մեռնելիս լինի խուլ ու անծայրածիր դաշ-

տավայրում... Միայն խորհրդային թշնա-  
նությունը կոգնի, նա, վոր ջախջախեց բեգե-  
րի ու չելսերի ճնշման շղթաները...

\*\*\*

Հանդարտ վառվում ե կոնի մոտի կրակը:  
Կրակի շուրջը մի քանի քուրդ են հավաքվել:  
Նրանց յերկար բեղերը սովոր են գցում նրանց  
դեմքերի վրա ու աչքերում փայլում ե կրակի  
լույսը: Մեղմ աղբբից կարկաչող ջրի նման  
հոսում ե խարույկի կողքը նստածների խո-  
սակցությունը: Յեկ հանկարծ բոլորը լուս  
են...

Աղեն սկսում ե խոսել արոտատեղերի ու  
հարկերի մասին:

— Զաֆ փակե (շատ լավ), —բացական-  
չում ե Աղեն, —դե մի միտք արեք, թե ես քանի  
տարի ա մենք տանջվում ենք ես զաղաններից.  
ամենալավ արոտները նրանց ձեռին եր ու վոչ  
մի հարկ չեյին տալիս, այլ մեղանից եյին  
առնում: Մենք հմի ենպես կանենք, ինչպես  
Մստոն եր ասում. —բոլոր արոտները կհանձ-  
նենք քոչվորական խորհրդին...

Աղեն դեռ ելի շատ-շա'տ խոսեց: Ապա նա  
վերցրեց սրինդը, մոտեցրեց շրթունքներին ու  
լսվեց հարազատ յերդերի ձայնը: Ինչպես  
ձյունը ջերմ արեկից, հալվում եյին հնչյուն-  
ները դաշտի պարզկա ողում, թուչում կոները  
ու լցնում կանանց սրտերը ուրախությամբ,

իսկ հաբսնացուներին՝ անհուն կարտառվ դեպի  
իրենց յարը:

Սրինդը յերդում եր ավելի զիլ ու հնչեղ:  
Հովկական յեղանակը ուրախացնում եր չքա-  
վորների սիրտը, վոր նրանք ազատված են  
բեգերից: Հավաքված չքավորները, բատրակ-  
ներն ու միջակները տոնում եյին իրենց յեր-  
ջանկությունը, յերկար յերդում ու պարում  
եյին: Միայն առավոտյան լոեց սրինդն ու  
ժողովուրդը ցրվեց...

Քնաթաթախ քոչվորները զարթնեցին ինչ  
վոր աղմուկ-աղմղակից: Տղամարդիկ շապ-  
կանց դուրս եյին վաղում: Արդեն շատ մարդ  
եր հավաքվել: Բոլորը հուզված ու դրզոված,  
տաք-տաք վիճում եյին, բայց վոչ չգի-  
տեր իրենց քնահարամ անելու պատճառը:

Տեղ հասնելով, մեկը մյուսին հարցնում  
եր հուզված.

— Ի՞նչ ա պատահել, ի՞նչ:

Վոչ վոք վոչինչ չգիտեր: Ահա յերևացին  
բեգերի ազգականների ահեղ կերպարանքներո,  
նրանց հետ և յերկարամորուս մոլլաները, փի-  
րերը և շեյխները:

— Ո հավատացյալներ, —սկսեցին նրանք,  
մեծ խուաղեն մեղ փորձություն և ուղարկում:  
Հերիք չեր, վոր մեր իշխանությունը անցակ  
անսատվածների ձեռքը, հիմա յել մեր բեգե-  
րին են ձերբակալել, ձերբակալված են նույն-  
պես և կավալիները մեր սրբազան Մելոք-  
թառողի հետ միասին: Ես ամենը նրա արածն

ա: Ո՞ հավատացյալներ, դտեք նրա պատիժը:

Դուք կամ պիտի կոտորվեք կամ պիտի վերացնեք եղ Մստոյին...

Զքավորները, բատրակներն ու միջակներո՝ ուրախացան այդ ձերբակալությունից՝ ցրվեցին իրենց տները:

Հրապարակում մնացին բեգերի աղքականները, հոգեվորականներն ու յերեք հոգի կուլակների հավատարիմներից:

Աստղազարդ գիշերը պինդ հպել եր յերկրին, ու ամեն ինչ քարացել եր նրանց համբույցի մեջ: Վոչ մի շարժում: Յերբեմն քամին եր թեթև սուլում, և նորից տիրում եր լոռություն ու անդորր, վոր յերբեմնակի ընդհամում եր շվքի մելամաղձոտ յերդով:

Մեղմ ու հանդարտ դիշերը հանդիստ եր տալիս բեգերի ու շեյխերի ծանր լծի տակ տանջվածներին:

Բատրակները գրվում եյին հողաճտառ միության անդամ, իսկ յերիտասարդությունը, վոր բեգերի ահից ծածուկ ու վախով եյին մոտենում կոմսոմոլի շարքերը, հիմա ազատ ու բացահայտ կերպով դիմում եյին տալիս կենինյան կոմյերիտմիության շարքերն անցնելու:

Քուրդ քոչմորների մեջ յեռաց նոր կյանքի, սոցիալիզմի կառուցման ու նոր կենցաղի կազմակերպման մի չըջան:

ՀՀ Ազգային գրադարան



NL0317486

ԳԻՒԾ 50 ԿՐԹ.

9668

772



891.57  
6-28